



Խմբագիրներ`

Շուշաննա Թևանյան
Արսեն Աբրահամյան

Թարգմանիչ`

Շուշաննա Թևանյան

Սրբագրիչ`

Թագուհի Սուսլիյան

Նկարազարդող`

Հարություն Թումադյան

Էջադրող և ձևավորող`

Կլիմ Գրեչկա

Ծրագրի համադրող`

Մարիամ Եղիազարյան
Տիգրան Ամիրյան

ZINEադադար p.s. - CSN Lab,
Երևան, 2023

Editors

Shushanna Tevanyan
Arsen Abrahamyan

Translator

Shushanna Tevanyan

Proofreader

Taguhi Susliyan

Illustrator

Har Toum

Layout designer

Klim Gretchka

Project curator

Mariam Yeghiazaryan
Tigran Amiryan

ZINEadadar p.s. - CSN Lab,
Yerevan, 2023

Հրատարակումն իրականացնում է «Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա» ՀԿ-ն Կանադայի Տեղական Նախաձեռնությունների հիմնադրամի աջակցությամբ:

The material has been published by the Cultural and Social Narratives Laboratory (CSN Lab) NGO, with the support of The Canada Fund for Local Initiatives (CFLI)



p.s.



Խաղաղ ապրելու իրավունքը
8

Լուսինե Խառատյան
26

Նարինե Վարդանյան
42

Սերինե Ավետիսյան
62

Նարինե Վարդանյան
78

Նայիրի Խաչատուրեան
88

Թամար Շիրինյան
104

Հետագիր
122

The Right To Live in Peace

9

Lusine Kharatyan

27

Narine Vardanyan

43

Serine Avetisyan

63

Narine Vardanyan

79

Nairi Khatchadourian

89

Tamar Shirinian

105

P.S.

123

The Right To Live in Peace

Խաղաղ ապրելու
իրավունքը



*Մշակույթի պաշտպանությունը ոչ միայն
մշակութային, այլև մարդասիրական և
անվտանգային հիմնահարց է:*

**ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախկին գլխավոր
քարտուղար Իրինա Բոկովա**

Մարդու իրավունքների համակարգը
տեսաբանների ու իրավապաշտպան
շրջանակների կողմից հաճախ դիտարկվում
է որպես հիերարխիա, որում քաղաքական
ու քաղաքացիական, սոցիալական
ու տնտեսական իրավունքներն
օգտակարության տեսանկյունից որոշակի
գերակայություն են ստանում մշակութային
իրավունքների նկատմամբ: Այս ընկալումն
առավելապես արմատավորված է
հատկապես հակամարտության գոտիներում
և հետպատերազմական երկրներում,
որտեղ վտանգված է ֆիզիկական գոյության

The protection of cultural heritage today is far more than a cultural issue: this has become a humanitarian imperative, and a security issue.

UNESCO's Former Director-General
Irina Bokova

The human rights system is often viewed hierarchically by theorists and human rights organizations, where political, civic, social, and economic rights are given precedence over cultural rights, particularly in conflict zones and post-war nations where the right to life is in jeopardy. This holds true in Armenia and the surrounding region. Hence, the "ZINEadadar" project's conclusive publication aims to reestablish a platform for discussing cultural rights, with a particular emphasis on women's experiences in this challenging context.

իրավունքը: Այս է իրականությունը նաև Հայաստանում և տարածաշրջանում, ուստի «ZINEադադար»-ի այս ամփոփիչ հրատարակությամբ ցանկանում ենք վերստին ստեղծել մի տարածություն՝ պատերազմի և հակամարտության համատեքստում մշակութային իրավունքների ու հատկապես կանանց փորձառության մասին բարձրաձայնելու համար:

Սովորաբար պատերազմները հայտարարվում և իրականացվում են տղամարդկանց կողմից, ուստի այս նախագծի միջոցով մենք փորձում էինք հասկանալ, թե ինչպես կարող են կանանց փորձառությունն ու գիտելիքները նպաստել խաղաղության խոսույթի ձևավորմանն ու հանրահռչակմանը: Ծրագրի կարգախոսը լիովին արտահայտում է այս գաղափարախոսությունը. «Կանայք հայտարարում են զինադադար»: Հենց այսպես/այստեղից սկիզբ առավ հայերենով և անգլերենով հրատարակվող «ZINEադադար» զինների, ինչպես նաև համանուն փողբասթների շարքը: Ի սկզբանե նախագիծը բոլորվել է մշակութային և սոցիալական իրավունքների շուրջ, և սույն գրքույկն անդրադարձ է առ այն, թե ինչպես են խաչվում հակամարտությունները, պատերազմները և մարդու իրավունքները:

Շուրջ մեկ տարի «ZINEադադար» հետազոտական նախագիծը բազմաթիվ մեթոդների ու ձևաչափերի միջոցով ուսումնասիրել է տարածաշրջանի պատերազմների ու հակամարտությունների համատեքստում կանանց փորձառությունը, վեր հանել պատմություններ, որոնք սովորաբար

Traditionally, wars have been declared and prosecuted by men. Therefore, through this project, we seek to explore how women's experiences and wisdom can enrich the development and widespread acceptance of peace-oriented discourses. Our project's slogan, "Women Declare a Truce," eloquently encapsulates this ideology. This initiative led to the creation of bilingual zines (in Armenian and English) and the launch of a podcast series bearing the same name. Initially, our project focused on cultural and social rights, and this booklet specifically delves into the complex interplay of conflicts, wars, and human rights.

Over the past year, the "ZINEadadar" research project has meticulously examined women's experiences within the context of regional wars and conflicts, shedding light on narratives often marginalized in patriarchal and militarized societies. Throughout this duration, the Cultural and Social Narratives Laboratory team has produced a series of compact publications in the form of zines. These zines blend the firsthand accounts of women with diverse backgrounds and war experiences, alongside analyses from experts and researchers. In addition to the zines, our two-season "ZINEadadar" podcast endeavors to craft alternative narratives, countering the prevailing narratives imposed on the wider public. It also seeks to enrich discussions surrounding critical issues such as mass forced displacement, resulting from war, migration, vision for peace, and,

դուրս են մտում պատրիարխալ և միլիտարիզացված հանրությունների իշխող խոսույթներից: Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիայի թիմն այս ընթացքում ստեղծել է փոքրածավալ հրապարակումներ՝ զիներ, որտեղ համադրվել են տարբեր ինքնություններ կրող, պատերազմները տարակերպ վերապրող կանանց վկայություններն ու հետազոտողների և փորձագետների վերլուծությունները: Ի լրումն զիների՝ երկու եթերաշրջանից բաղկացած «ZINEադադար» փողքասթի միջոցով մենք ջանացել ենք ստեղծել այլընտրանք հանրության լայն շրջանակներին հաճախ պարտադրվող պատումներին ու խոսույթներին, նպաստել այնպիսի հարցերի արծարծմանն ու դրանց շուրջ նոր տեսանկյուններից խոսույթի ձևավորմանը, ինչպիսիք են պատերազմի հետևանքով ահազնացող չափերի հասնող բռնի տեղահանության և միգրացիայի խնդիրը, խաղաղության տեսլականը և վերջապես՝ մշակույթի առանցքային դերը՝ որպես ամոքումից մինչև նոր իրականության ընկալման ու անդրադարձման հնար:

Պատերազմների և հակամարտությունների համատեքստում կանանց փորձառությունը վավերագրելը կարևոր, բայց և դժվարին գործընթաց է: Վերապրումը վկայության վերածելու ճանապարհին կանանց փորձառության զգայական տարրերը զգուշորեն ներկայացնելու համար՝ մենք ընտրել ենք խորքային հարցազրույցների մեթոդը: Այս որոշման հիմքում ընկած էր նաև կանանց ձայնը հնարավորինս

notably, the pivotal role of culture in healing, understanding, and reflecting upon reality. The creation of fresh discourses pertaining to these subjects is equally paramount to the project's mission.

Capturing women's experiences within the context of wars and conflicts is both essential and challenging. On our path to translating the struggle for survival into powerful testimony, we opted for in-depth interviews as our method of choice, aiming to sensitively convey the emotional facets of these experiences. Our decision was driven by the intent to amplify women's voices in the most unfiltered manner possible. Within the framework of this project, the Cultural and Social Narratives Laboratory team conducted interviews with approximately thirty women from different countries (Armenia, Belarus, Georgia, Ukraine). Some of these compelling stories have found their way into the pages of "ZINEadadar" zines, while the remainder will serve as a foundation for forthcoming analyses and research endeavors. Throughout this journey, we've had numerous opportunities to discuss the research's progress and outcomes. We've engaged in diverse meetings and discussions across various countries and communities, and we've proudly unveiled editions of our zines.

չմիջնորդավորված լսելի դարձնելու դիրքորոշումը: Նախագծի շրջանակներում Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիայի թիմը զրուցել է տարբեր երկրներից (Բելառուս, Հայաստան, Վրաստան, Ուկրաինա) շուրջ երեք տասնյակ կանանց հետ, որոնց պատմությունների մի մասը հրապարակվել է «ZINEադադար»-ի հանդեսներում, իսկ մյուսները հիմք են հանդիսանալու վերլուծությունների և գալիք հետազոտական նախագծերի համար: Այս ընթացքում բազմաթիվ առիթներ ենք ունեցել խոսելու և ներկայացնելու մեր հետազոտության զարգացումներն ու արդյունքները: Մասնակցել ենք տարբեր երկրներում և համայնքներում տեղի ունեցած հանդիպումների, քննարկումների, ինչպես նաև՝ Երևանում անցկացրել «ZINEադադար»-ի հրատարակությունների շնորհանդեսը:

Գիտական հանրույթը գուցե տևական ժամանակ համաձայնության չգա այն հարցի շուրջ, թե ինչն է մեր ժամանակների հակամարտությունների և պատերազմների հիմքը. ազգային ինքնության և մշակութային անհամատեղելիության սպառնալիքով քողարկված տնտեսական շահերը, իշխանության համար մղվող պայքարը, քաղաքական և/կամ կրոնական տարակարծությունը, տարածքային վեճերը, թե՛ բացառապես նյութական շահի տարատեսակ դրսևորումները որպես այդպիսիք: Այդուհանդերձ այս ամենը հասկանալու և վերլուծելու առումով առանցքային դեր

Within academic circles, achieving a consensus regarding the root causes of contemporary conflicts and wars remains elusive. These factors span a spectrum, including economic interests veiled by conflicting national identities and cultures, power struggles, political and/or religious discord, territorial disputes, and various manifestations of material interests. Regardless of the specific trigger, it is imperative to recognize the pivotal role that cultural rights and processes play in comprehending and dissecting these multifaceted dynamics.

The term "cultural rights" may lead one to believe that these rights are exclusively relevant to artists and cultural figures, they are, in fact, applicable to all individuals. In accordance with UNESCO's 2005 Convention on the Protection and Promotion of the Diversity of Cultural Expressions, cultural rights encompass the right to participate in cultural life, access the benefits of scientific progress and its applications, access education and safeguard authorship interests.

Embracing the United Nations' principle that human rights are universal, indivisible, interconnected, and interactive, this last publication underscores the realization of cultural rights as a significant instrument in preventing armed conflicts or mitigating their consequences.

In the aftermath of wars, amidst widespread shock and demoralization, cultural rights possess a priceless potential to help

ունեն մշակութային իրավունքները և գործընթացները:

«Մշակութային իրավունքներ» եզրույթից կարող է թյուր տպավորություն ստեղծվել, թե դրանք վերաբերում են բացառապես արվեստագետներին ու մշակութային գործիչներին, մինչդեռ իրականում դրանք բոլորիս համար և մասին են: Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թվականի «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիայի՝ մշակութային իրավունքները ներառում են մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, գիտական առաջընթացի և դրա արդյունքներից օգտվելու իրավունքը, կրթության իրավունքը և հեղինակների իրավունքները: Ընդունելով ՄԱԿ-ի պաշտոնական դիրքորոշումն առ այն, որ մարդու իրավունքները համընդհանուր են, անբաժանելի, փոխկապակցված ու փոխազդող՝ այս հրատարակումը դիտարկում է մշակութային իրավունքների իրացումը՝ որպես զինված հակամարտությունները կանխելու կամ դրանց հետևանքները հաղթահարելու կարևոր գործիք:

Պատերազմներից հետո՝ ընդհանուր ցնցման ու հուսալքման պայմաններում, մշակութային իրավունքները անգնահատելի ներուժ ունեն՝ հաղթահարելու առկա տրավմաները, խթանելու (ինքնա)հաշտեցումը, համախմբելու տարբեր ինքնություններ ունեցող մարդկանցից բաղկացած հասարակությանը, վերանայելու կրթական և մշակութային քաղաքականությունները, ստեղծելու

overcome present traumas, foster (self) reconciliation, unify a society composed of diverse identities, reevaluate educational and cultural policies, and establish a fresh platform for critical reflection and reinterpretation. The emphasis, protection, and realization of cultural rights can empower society, particularly vulnerable groups, enabling them to articulate their needs effectively and engage actively in decision-making processes. Amidst the backdrop of escalating hate speech and the proliferation of divisive lines within society, cultural rights can serve as a conduit to bridge various social groups and individuals with different gender identities, offering a peaceful avenue to express pain and disagreements. Furthermore, the framework of cultural rights provides a unique and practical language through which society can hold state agencies and international organizations accountable in cases of rights violations.

This booklet is released during a critical time when, just a few hundred kilometers away in Artsakh/Nagorno-Karabakh, over 120,000 Armenian civilians have been enduring an ongoing blockade imposed by Azerbaijan for more than 8 months. The Nagorno-Karabakh conflict, spanning nearly three decades, remains unresolved, while the war in Ukraine persists without a clear conclusion, leaving the region still yearning for a stable and lasting peace.

վերաբժնորման և վերափմաստավորման նոր եզերքներ: Դրանց կարևորումը, պաշտպանությունն ու իրացումը կարող են գործեղացնել հանրությանն ու հատկապես խոցելի խմբերին՝ առավել արդյունավետ բարձրաձայնելու իրենց կարիքների մասին և գործուն մասնակցելու որոշումների կայացման գործընթացներին: Ատելության խոսքի ուժգնացման և հասարակության ներսում բաժանարար գծերի բազմապատկման համատեքստում մշակութային իրավունքները կարող են հաշտեցման տարածք ստեղծել՝ կամրջելով տարբեր սոցիալական խմբերի, տարբեր գենդերային ինքնություններ ունեցող մարդկանց և հնարավորություն տալով ցավի ու տարաձայնությունների խաղաղ արտահայտմանը: Մշակութային իրավունքների համակարգը նաև ստեղծում է յուրահատուկ գործառնական լեզու, որով հանրությունը կարող է վերահսկել և պատասխանատվության կանչել պետական մարմիններին և միջազգային կազմակերպություններին այս կամ այն իրավունքի խախտման առնչությամբ:

Այս գրքույկը լույս է տեսնում մի

ժամանակահատվածում, երբ ընդամենը մի քանի հարյուր կիլոմետր այն կողմ՝ Արցախում/Լեռնային Ղարաբաղում, 120 000 խաղաղ բնակիչներ արդեն իսկ 8 ամսից ավելի շրջափակման մեջ են Ադրբեջանի կողմից, չի հանգուցալուծվել շուրջ երեք տասնամյակ ձգվող դարաբաղյան հակամարտությունը, չի ավարտվել Ուկրաինայի պատերազմը, և տարածաշրջանում դեռևս չի հաստատվել հիմնային ու երկարաժամկետ խաղաղություն:

The escalating humanitarian crisis in Nagorno-Karabakh, which has not only deprived thousands of children of education but also halted the operations of cultural and scientific institutions, has evoked a spectrum of responses in Armenia. These range from profound indifference to vehemently expressed anger. Hence, it becomes imperative for us to spotlight the discourse on cultural rights, elevating it from the overshadowing veil of war-related discourses. We must recognize cultural rights as a vital prerequisite for the fulfillment of all other human rights.

This last release of "ZINEadadar" project is a compilation of six women's narratives, expert insights and experiences. These women articulate the primary hurdles obstructing the realization of cultural rights within the Armenian context while illuminating potential pathways to surmount these challenges. This publication delves deeply into the enduring impact of the Nagorno-Karabakh conflict and ongoing warfare, investigating their continuous effects on the organization of education, the advancement of scientific endeavors, memory politics, gender dynamics, cultural vibrancy, and the exercise of artists' rights in both Armenia and Artsakh/Nagorno-Karabakh. Through comprehensive interviews and expert insights, we've sought to uncover reflections to these and numerous other issues, shedding light on the multifaceted political, social, legal,

Լեռնային Ղարաբաղում օրեցօր սրվող հումանիտար ճգնաժամին, որ նաև հազարավոր երեխաների զրկել է կրթության իրավունքից, կասեցրել մշակութային ու գիտական հաստատությունների գործունեությունը, չայաստանում արձագանքում են տարբեր եղանակներով՝ հուսահատ անտարբերությունից մինչև վառ արտահայտված զայրույթ: Ուստի մեզ համար կարևոր է վերստին խոսել մշակութային իրավունքներից՝ դրանք դուրս բերելով պատերազմական խոսույթի ստվերից և ձևակերպելով իբրև կարևոր նախապայման մյուս բոլոր իրավունքների իրացման գործում:

«ZINEադադար» նախագծի ամփոփիչ հրատարակումը միավորում է վեց կանանց պատմությունները, մասնագիտական դիրքորոշումները, կարծիքներն ու փորձառությունը, որոնք բարձրաձայնում են հայկական միջավայրում մշակութային իրավունքների իրացման հիմնական խոչընդոտների մասին՝ միաժամանակ մատնանշելով դրանք հանգուցալուծելու որոշակի ուղիներ: Ինչպես են դարաբաղյան հակամարտությունն ու պատերազմը տարիներ շարունակ ազդում չայաստանում և Արցախում/Լեռնային Ղարաբաղում կրթության կազմակերպման, գիտության զարգացման, հիշողության քաղաքականության, գենդերային հիմնահարցերի, մշակութային կյանքի և արվեստագետների իրավունքների իրացման վրա: Այս և մի շարք այլ հարցերի պատասխաններն ենք փորձել գտնել խորքային հարցազրույցների և փորձագիտական տեքստերի միջոցով, որոնք



վերհանում են ստեղծված ծանր իրադրության
թե՛ քաղաքական, թե՛ սոցիալական, թե՛
իրավական և թե՛ զգայական կողմերը:

Առօրեական կյանքի մշակույթի

շարունակականությունը, մշակութային կյանքի
և կրթության հասանելիությունը, գիտական
գործընթացներին մասնակցությունը, տեղի
հետ կապվածության պահպանումը, ազատ
տեղաշարժի հնարավորությունը, ընտանեկան,
սոցիալական և տեղի հիշողության
անընդհատությունը, լեզվական ինքնության
արտահայտման ազատությունը, բռնությունից
և ագրեսիայից զերծ արժանապատիվ կյանքի
հնարավորությունը. այս ամենը կարմիր թելի
պես անցնում էր բոլոր հարցազրույցներում,
որոնք հավաքագրեցինք մեր նախագծի
շրջանակներում: Այս է կանանց ցանկությունը,
երբ նրանք դադարում են վերարտադրել
պատրիարխալ և միլիտարիզացված
խոսույթները: Մեր բոլոր պատումները
նախնառաջ խարսխված են մշակութային
իրավունքներին, խաղաղ ապրելու
իրավունքին:

and emotional dimensions of the current complex circumstances.

The threads of continuity in everyday life culture, access to cultural engagement and education, active involvement in scientific endeavors, the preservation of strong bonds to one's homeland, the freedom to move without constraint, the perpetuation of family, social, and local memories, the unrestricted expression of linguistic identity, and the aspiration for a dignified life free from violence and aggression—all of these themes reverberated consistently throughout the interviews we conducted within the framework of our project. These profound desires encapsulate what women yearn for when they seek to transcend patriarchal and militarized narratives. Above all, their narratives are intrinsically rooted around cultural rights and the desire to live in peace.

Lusine Kharatyan
Cultural Anthropologist,
Novelist



Լուսինե Խարատյան
Մշակութային մարդաբան,
արձակագիր



Հայաստանում հիշողության քաղաքականությունը անկախացումից ի վեր պայմանավորված է եղել իշխող կուսակցության կամ այդ պահին իշխանությանը մոտ գտնվող մարդկանց մոտեցումներով: Անկախացմանը հաջորդած առաջին շրջանում հիշողության քաղաքականությունը հիմնականում ուղղված է եղել խորհրդային անցյալից ձերբազատվելուն և ազգային պետության հիմքերը դնելուն, դրանով իսկ պայմանավորված՝ փորձել է արդիականացնել ազգային հիշողությանն ու պատմությանն առնչվող թեմաներ: Հետագայում հիշողության քաղաքականության մեջ ակտիվ դեր է սկսում խաղալ ղարաբաղյան հակամարտությունը, և վերջինս կապվում է մեր մետապատումին, որտեղ գերիշխում է Ցեղասպանության հիշողությունը: Քաղաքական մակարդակում թուրքերին ու ադրբեջանցիներին մենք չենք նույնացնում, բայց հիշողության քաղաքականությունը, Ցեղասպանության իշխող պատումը և Ղարաբաղյան պատերազմին հաջորդած էթնիկ զտման վտանգը հանգեցնում են այդ նույնացմանը:

Հիշողության քաղաքականությունն առավել ընկալելի դարձնելու և վերլուծելու համար կարելի է անդրադառնալ դրա մի քանի հիմնական դրսևորումներին: Նախևառաջ պետք է դիտարկել հիշողության լանդշաֆտը, այսինքն՝ այն նյութական ժառանգությունը՝ հուշահամալիրները, հուշարձանները և դրանց հետ կապված իրադարձությունները, որոնք մենք հիշում ենք որպես հասարակություն, ինչպես նաև վերլուծել այն բովանդակությունը, որը պետությունը նախընտրում է

In the post-independence era of Armenia, the dynamics of memory politics have been intertwined with the perspectives endorsed by the ruling party or people close to power at a particular period of time. This interplay is notably evident in the initial years following independence, marked by a concerted effort to distance the nation from its Soviet legacy and establish the fundamental underpinnings of a nation-state. This endeavour was accompanied by a focus on revitalising themes of national memory and history. Subsequently, the emergence of the Karabakh conflict assumed a central role within the realm of memory politics, becoming intricately interwoven with our metanarrative where the memory of the Genocide prevails. While refraining from overtly equating Turks and Azerbaijanis at a political level, the memory politics, the prevailing narrative of the Genocide and the looming specter of ethnic cleansing following the Karabakh war converge to foster an association that transcends political delineations.

To enhance the comprehension and analysis of the politics of memory, one can delve into its key manifestations. Firstly, the realm of memory, which involves the tangible heritage: complexes, monuments, and related events around which significant societal recollections have been formed. Thus, the scrutiny of the content that the state chooses to commemorate is imperative. The second dimension is the practice of

հուշարձանացնել: Երկրորդ՝ պետք է ուսումնասիրել անվանակոչման պրակտիկան. հասկանալ, թե ինչպես են անվանվում կամ վերանվանվում մեր բնակավայրերը, փողոցները և այլն: Երրորդը մշակութային ժառանգությանն առնչվող հարցերն են, այսինքն՝ ինչն է դառնում կարևոր և վերածվում հանրային հիշողության բաղկացուցիչ տարրի: Չորրորդը մեր օրացույցում ընդգրկված և պետության կողմից կարևորվող հիշատակի օրերի և տոների բովանդակային և ընթացակարգային հարցերն են, և վերջապես հինգերորդը պատմության, գրականության, հասարակագիտության և այլ հումանիտար գիտակարգերի միջոցով հիշողության ձևավորման մարտավարությունն է: Գործոնների այս ցանկը կարելի է լրացնել, բայց հիշողության քաղաքականությունը հիմնականում ձևավորվում է վերոնշյալ հինգի միջոցով:

Նախքան հետպատերազմյան շրջանին անդրադառնալը պետք է նշել, որ 2018-ին, երբ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը եկավ իշխանության, հետաքրքիր զարգացումներ տեղի ունեցան հիշողության քաղաքականության համատեքստում: Նախ՝ որոշվեց մարտի 1-ի զոհերի հիշատակի հուշարձան կանգնեցնել, այսինքն՝ փոխել մեր հիշողության տարածքը, ավելացնել ևս մեկ հուշարձան, որը, ըստ «Քաղաքացիական պայմանագրի» ձևակերպման, քաղաքացիական և քաղաքական պայքարի արդյունքում զոհված մարդկանց հիշատակը հարգելու մասին է: Երկրորդ՝ որոշվեց տոնացույցում ավելացնել Քաղաքացու օրը, որը նույնպես նորություն էր:

nomenclature. This entails deciphering the rationale behind the naming or renaming of our settlements, streets, and other entities. The third facet centres around cultural heritage, highlighting the instances when certain elements are elevated to become an integral part of public memory. Fourthly, the substantive and procedural aspects of commemorative days and state-emphasised holidays within our calendar. And last but not least, the strategy of forming memory through history, literature, social studies and other disciplines. While this list is not exhaustive, it encompasses the pivotal influences that mould the landscape of memory politics.

Before delving into the post-war period, it is important to discuss some significant developments in the realm of memory politics in 2018, following the ascension of the "Civil Contract" party to power. First of all, a decision was made to erect a monument honouring the victims of the March 1 events. This effort, indicative of a deliberate expansion of our memoryscape, involved introducing a new monument to commemorate those who lost their lives in the tumultuous civil and political struggles, as articulated by the "Civil Contract." Secondly, the introduction of Citizen's Day into the calendar, which was itself a novelty: in our traditional calendar, religious holidays have long held prominence, often tied to ethnic and national identities. However, there was a notable absence of a day

Մեր տոնացույցը կազմված է հիմնականում եկեղեցական տոներից և այնպիսի հիշատակի օրերից, որոնք առավել կապված են էթնիկ/ազգային ինքնության հետ: «Քաղաքացի» հասկացությանն առնչվող որևէ տոն չկար մեր տոնացույցում, և Քաղաքացու օրը ավելացնելու հանգամանքը միանգամայն նոր տիպի հիշողություն կառուցելու մասին է վկայում: Երրորդ փոփոխությունը, որ նկատվեց 2018 թվականից հետո, տոների, հիշատակի օրերի և այլ միջոցառումների ապակենտրոնացումն է: Մեր տեղական մշակույթը զգալիորեն կառուցված էր խորհրդային մոդելի օրինակով, երբ վերևից ներքև էր լինում տոնակատարությունը: Փոփոխության արդյունքում տեսնում ենք ապակենտրոնացման ցանկությունը, ինչը հնարավորություն է տալիս ամեն թաղամասին և համայնքին ինքնուրույն որոշելու՝ ինչպես նշել իր տոնը: Վերոնշյալ դեպքերը խոսում են հիշողության քաղաքականության ազատականացման միտումների մասին, ռազմական հաղթանակներից և ազգային թեմաներից դուրս ներքևից վերև հիշողության տարածքներ ստեղծելու մասին:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմը, իհարկե, որոշակիորեն ազդեց հասարակության, հիշողության քաղաքականության և մշակույթի վրա: Տարբեր մակարդակներում կարծես հետադարձ է նկատվում դեպի հիշողության նախկին քաղաքականություն, բայց այդ ամենն իրականացվում է ոչ թե վերևից ներքև տրամաբանությամբ, այլ հենց համայնքների մակարդակում: Մենք տեսնում ենք տեղային նախաձեռնություններից մինչև պետական

dedicated to the concept of citizenship. The inclusion of Citizen's Day represents the inception of an entirely novel form of collective memory.

The third shift that emerged post-2018 pertained to the decentralisation of holidays, memorial days, and other significant events. Our local cultural norms were deeply rooted in a Soviet model of top-down celebration. However, a palpable drive for decentralisation has taken hold, granting districts and communities the autonomy to shape their celebratory traditions. In essence, these developments collectively epitomise a burgeoning wave of liberalised memory politics, carving out grassroots memory landscapes that transcend conventional narratives of military conquests and nationalistic themes.

Undoubtedly, the second Karabakh war has left a distinct imprint on the society and its cultural fabric, as well as the memory politics. It becomes evident that a resurgence of previous memory politics is underway, albeit driven not by top-down directives but by communal initiatives. Ranging from grassroots undertakings to state-level endeavours, a noticeable expansion of space dedicated to Karabakh war memory is apparent within the public sphere. The war's substantial human toll has spurred numerous local initiatives, resulting in the installation of monuments, crosses, khachkars, fountains, and the renaming of streets – all bottom-up endeavours aimed

մակարդակով գործողություններ, որոնք հանրային տարածքում ավելի մեծ տեղ են հատկացնում Ղարաբաղյան պատերազմի հիշողությանը:

Պատերազմն ավարտվեց բավականին մեծ մարդկային կորուստներով, և մեծ թվով տեղական նախաձեռնություններ ի հայտ եկան, համայնքներում սկսեցին կանգնեցնել հուշարձաններ, խաչեր, խաչքարեր, ցայտաղբյուրներ, զոհվածների պատվին անվանակոչել փողոցներ: Սրանք ներքևից վերև նախաձեռնություններ են, որոնք միտված են հիշելու պատերազմի զոհերին և պատերազմը: Վերջերս քաղաքացիական հասարակության ակտիվ անդամներ Ծիծեռնակաբերդ տանող մայրուղին արցախյան ազատամարտի հիշատակին վերանվանելու նախաձեռնությամբ հանդես եկան: Սա վկայում է, որ քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող մարդիկ այժմ ցանկանում են, որ պատերազմի հիշողությունն ավելի մեծ ներկայություն ունենա մեր հանրային տարածքում և հիշողությունում: Եվ վերջինը՝ «Նեմեսիս» գործողության մասնակիցներին նվիրված աղմկահարույց աղբյուր-հուշակոթողի տեղադրումը, որը հիմք հանդիսացավ Թուրքիայի հետ հարաբերությունների բարդացման: «Նեմեսիսի» հուշակոթողը կապում է ղարաբաղյան պատերազմի հիշողությունը 20-րդ դարասկզբի Ցեղասպանության մեծ պատումին, ինչը փաստում է, որ հանրային ընկալման կամ հիշողության համատեքստում այս երկու իրադարձությունները կապվում են, և վրիժառությունը դեռևս չփակված թեմա է:

at commemorating the victims and the war itself. Moreover, the proactive involvement of civil society activists is palpable, exemplified by the initiative to rename the highway leading to Tsitsernakaberd in commemoration of the Artsakh liberation war. This act reflects a collective desire among civically active citizens to augment the war's presence within our public space and memory. Most recently, the contentious unveiling of the "Nemesis" monument, which has strained relations with Turkey, has further underscored the intricate interplay between the Karabakh war's memory and the historical backdrop of the early 20th-century Genocide. The "Nemesis" monument bridges these two events within the realm of public perception and memory, attesting to an unresolved undercurrent of retribution.

Even amidst the backdrop of war-induced trauma and ensuing challenges, an expanded opportunity and space for cultivating alternative narratives have emerged. Armenia, characterised by a considerable degree of freedom of speech, offers an open platform for diverse topics, ranging from advocating for war to championing peaceful resolutions. The trajectory and the prevalence of these narratives remain notably unpredictable.

Another significant quandary pertains to the receptivity towards narratives originating due to freedom of expression. The war and its enduring consequences have left our

Չնայած այս ամենին՝ պատերազմական և հետպատերազմական տրավմայի և մարտահրավերների համատեքստում այլընտրանքային պատում ստեղծելու հնարավորությունը և տարածությունը ընդարձակվել են: Նայաստանում խոսքի զգալի ազատություն կա, սակայն այդ ազատությունը և տարածությունը բաց են ամենատարբեր՝ պատերազմի կոչ անող թեմաներից մինչև խաղաղ կարգավորմանը վերաբերող թեմաների համար, և շատ բարդ է կանխատեսել, թե որ պատումներն ավելի արդիական կդառնան:

Մյուս մեծ խնդիրը ազատության տիրույթում ստեղծված պատումների լսելիության հարցն է: Պատերազմով և պատերազմի հետևանքներով պայմանավորված՝ մենք բավականին տրավմատիզացված հասարակություն ենք, և այդ հոգեվիճակից դուրս գալու հարցը ավելի արդիական է, քան այլընտրանքային պատումներ կառուցելը և տարածելը: Առկա են նաև որոշակի հոգնածություն և հյուծվածություն, որ խոչընդոտներ են ստեղծում որևէ նոր պատում ստեղծելու կամ ընդհանրապես այդ պատումը կառուցելը կարևորելու ճանապարհին: Ինչպես գիտենք, հակամարտությունը լուծված չէ, խաղաղություն դեռևս չկա, և բարդ է խոսելը՝ ինչ պայմաններով կլինի այն, Արցախում մարդկանց կյանքի ու անվտանգության հարցն առկախված է, և այս իրավիճակում բարդ է թե՛ այլընտրանքային պատումներ կառուցելը, թե՛ դրանք ակտուալ դարձնելը:

society deeply traumatised, with the process of transitioning away from this collective mindset taking precedence over the construction and propagation of alternative narratives. Additionally, a palpable sense of fatigue and exhaustion within the society acts as a deterrent against embarking on the endeavour of creating and prioritising new narratives. In the midst of the ongoing and unresolved conflict, the elusive state of peace, and the precarious well-being of Artsakh's inhabitants, the task of creating and implementing new narratives becomes incredibly challenging.



Within the context of the Armenian-Azerbaijani conflict, attempts to utilise cultural heritage as a tool for peacebuilding or reconciliation have been notably absent. For instance, during the 1990s, a period marked by migrations among Armenian and Azerbaijani communities, initiatives and arrangements were undertaken to take care of each other's graveyards. These efforts were carried out at the community level, with Armenians and Azerbaijanis taking photos of the safeguarded graveyards and exchanging them as a gesture of reassurance, demonstrating their commitment to honouring their promises. There is the case of certain settlements in Amasya, where, according to select field materials in our possession, local authorities and other people from the community urged

Հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում մենք առայժմ չենք տեսնում, որ մշակութային ժառանգությունը որևէ կերպ ծառայեցվի՝ ի նպաստ խաղաղության կառուցման կամ հաշտեցման: Օրինակ՝ 90-ականներին, երբ տեղի էին ունենում հայկական ու ադրբեջանական համայնքների տեղափոխություններ, լինում էին միմյանց գերեզմաններին հետևելու նախաձեռնություններ և երկուստեք պայմանավորվածություններ: Դրանք իրականացվում էին համայնքային մակարդակներում. հայերը և ադրբեջանցիները պարբերաբար նկարում էին պաշտպանվող գերեզմանները և իրար ուղարկում՝ ցույց տալու համար, որ իրենք տիրություն են անում գերեզմաններին: Ամասիայի շրջանի որոշ բնակավայրերում ադրբեջանական գերեզմաններ կան, և, ըստ մեր ունեցած որոշ դաշտային նյութերի՝ ադրբեջանցիների հեռանալուց հետո նորաբնակ ջավախահայերին տեղի անվտանգության աշխատակիցները և այլ մարդիկ հորդորել էին չքանդել և չպղծել ադրբեջանական գերեզմանները: Այս դեպքը ցույց է տալիս, որ պետական մակարդակում փորձել են մշակութային ժառանգությունը պահպանել: Սակայն բոլոր այս դեպքերը չեն վերաճել և վերածվել խաղաղաշինության կամ հաշտեցման ծրագրի:

Մշակութային ժառանգության պաշտպանության կամ ոչնչացման հարցերը տարբեր են Հայաստանի և Ադրբեջանի պարագայում: Նախիջևանի Ջուղայի



հայկական գերեզմանատունը պետական նախաձեռնությամբ է ոչնչացվել, մինչդեռ Հայաստանում պետական մակարդակում արված նման գործողություն չունենք: Այստեղ մենք տեսնում ենք որոշակի տարբերություն. մի բան է, երբ մարդիկ զայրույթից կամ հուսահատությունից դրդված են գնում վերացման քայլին, և այլ է, երբ մշակութային ժառանգությունը վերացվում է պետության նախաձեռնությամբ:

Միտքը, թե յուրաքանչյուր մարդու մեջ կա գազան, և երբ այդ գազանը արթնանում է, սկսում է բռնի վարք դրսևորել, մի՞ջ է: Մարդն ի սկզբանե գազան չէ, և շատ քիչ տոկոս են կազմում մարդիկ, որոնք իրականում պատրաստ են սպանելու և վնասելու: Այստեղ աշխատելու տարածք կա, և այդ տարածքում հնարավոր է աշխատել՝ նաև մշակութային ժառանգությունը պաշտպանելու և ի նպաստ խաղաղության ու հաշտեցման ծառայեցնելու ուղղությամբ:



the Armenian migrants from Javakhk not to destroy or damage the existing Azerbaijani graveyards. This example demonstrates an attempt also on the state level to preserve cultural heritage. Regrettably, despite these scattered instances, they have not evolved into a cohesive program aimed at fostering peace and reconciliation.

The dynamics surrounding the preservation or destruction of cultural heritage display contrasting features in Armenia and Azerbaijan. A prominent example is the Nakhijevan Jugha Cemetery, where state-driven initiatives in Azerbaijan have led to significant damage. In contrast, Armenia has not shown similar orchestrated actions at the state level. A stark difference is evident here: on one hand, there are instances where people may resort to acts of elimination out of anger or desperation. On the other hand, there are cases where the state itself takes the initiative to eradicate cultural heritage deliberately.

The notion that a primal instinct resides within each individual, triggering violent behavior when unleashed, is a myth. A human being does not inherently possess a bestial nature, and only an exceedingly small fraction of individuals are truly predisposed to commit acts of violence and harm. Within this context, a viable avenue emerges—a sphere where concerted efforts can be channelled to safeguard cultural heritage, a shared endeavour that can serve as a catalyst for peacebuilding and reconciliation.

Narine Vardanyan

The Head of Leadership
Development at “Teach for
Armenia” Foundation

Նարինէ Վարդանյան
Առաջնորդության
զարգացման ղեկավար
«Դասավանդի՛ր,
Հայաստան» հիմնադրամում





Ես դպրոց եմ գնացել սահմանամերձ Ներքին
Կարմիրաղբյուր գյուղում: Սովորել եմ մի
դպրոցում, որտեղ կադրերի զգալի պակաս
կար: Իմ սովորելու տարիներին համայնքը
բավականին փոքրացել էր արտագաղթի
հետևանքով, ուսուցիչների պակաս կար, այդ
իսկ պատճառով, օրինակ, քիմիա ու էլի մի
շարք առարկաներ ես չեմ ուսումնասիրել:
Սահմանամերձ գյուղ լինելը զգացվում էր ն
առօրյա կյանքում, ն կրթական գործընթացում:
Այս ամենի պատճառները գուցե մի քանիսն
են. Արցախյան առաջին պատերազմի
ընթացքում շատ մարդիկ կորցրել էին իրենց
տները ու պատերազմից հետո երկար
ժամանակ փորձում էին վերականգնվել ու
հաղթահարել հետևանքները, բայց 2008-ից
սկսած՝ Նորից սկսվեցին ակտիվ կրակոցներ
ու դիրքային պարբերական բախումներ, և
մարդկանց մի զգալի մասը լքեց համայնքը:
Սահմանամերձ գյուղում մենք բազմաթիվ
խնդիրների միջով էինք անցնում: Երբ
կրակոցներ էին լինում, լույսերն ու գազն
անջատում էին, որ հրդեհներ չլինեն, ու
հիշողություններումս իմ ու եղբորս երեկոյան
դաս սովորելը միշտ մոմի լույսի տակ էր:
Մեր տունը նայում էր դեպի սարերը, դեպի
ադրբեջանական դիրքերը, ու մենք մոմը
վառում էինք ներսի սենյակում, որ թիրախում
չհայտնվեինք: Երբ ինչ-որ հանդիպում էր
կամ բանակցային գործընթաց, կամ ինչ-որ
ադրբեջանական տոն, գյուղում շշուկներ
էին պատվում, որ «էսօր հանդիպելու են»,
կամ «էսօր տոն ա», ու մենք արդեն գիտեինք,
որ կրակելու են, որ լույսերը տանելու են, ու
որ պետք է դասերը ցերեկն անել, որ մոմի

I went to school in the border village of Nerkin Karmiraghbyur. The school where I studied had a significant shortage of personnel. During my years of study, the village experienced a notable decline in the population due to outmigration, which in turn resulted in a shortage of teachers. As a consequence, I was unable to study certain subjects like chemistry and others. Both the daily routine and the educational process reflected the distinctive traits commonly found in a border village. There are probably a few reasons for this: during the first Artsakh war, many people had lost their houses and in the aftermath of the war, they were focused on recovery and coping with its consequences but since 2008, active shootings and periodic clashes resumed, forcing a significant number of residents to leave the community.

We faced many problems in the border village. During periods of shootings, the lights and gas were routinely switched off to minimize the risk of fires; in my recollections, my brother and I always had to study by candlelight at such times. Our house faced the mountains and the Azerbaijani positions, so, to avoid becoming a target, we would always light the candle in the inner room. In anticipation of a scheduled meeting or a negotiation process or some kind of Azerbaijani celebration in the village, rumors would inevitably circulate saying things like "they are meeting today" or "today is a celebration", and we already knew that

լույսի տակ չմնանք: Մենք այս ամենը շատ նորմալ էինք ընդունում, ու ինքս հիմա եմ որոշ բաներ հասկանում: Նոր տարուն երբեք չէին կրակում, Նոր տարուն միայն օդ էին կրակում և մերոնք, և իրենք: Կրակում էին լույս արձակող փամփուշտներ՝ որպես հրավառություն:

Շատ հաճախ են եղել դեպքեր, երբ սկսվել են կրակոցներ, ու դասապրոցեսն ընդհատվել է: Երբեմն օրեր շարունակ դասերը բաց էին թողնում: Հենց կրակում էին, արագ իջնում էինք նկուղային հարկ կամ տուն էինք գնում: Հիշում եմ՝ ավարտական դասարանում էինք, երեկո էր, վերջին զանգի փորձն էինք անում, երբ սկսեցին կրակել հենց դպրոցի ուղղությամբ: Մենք ամեն ինչ հավաքեցինք ու ամբողջ դասարանով իջանք նկուղ ու եղ մթության մեջ փորձն արեցինք՝ երգելով ու կատակներ անելով: Շատ անհեթեթ էր. մեզ վրա կրակում էին, իսկ մենք երգում էինք ու ծիծաղում:

Պատերազմը թողել է նաև մեծ հոգեբանական ազդեցություն: Ես հաճախ էի մտածում, թե ով եմ ես, ինչ եմ դառնալու, ինչ եմ անելու, ինչ կարող եմ անել, որ իմ գյուղում մի բան փոխվի: Մենք սահմանամերձ էինք, համարվում էինք տուժող, և մեզ հաճախ օգնություն էին ուղարկում ինչ-որ տուփիկների տեսքով, որոնք օտար երկրներից, օրինակ՝ Կանադայից, ինչ-որ երեխաներ էին պատրաստում և ուղարկում հակամարտությունից տուժած երեխաներին: Տուփերում գրիչներ էին, խաղալիքներ և այլ նվերներ: Մենք շատ էինք ուրախանում, ես, իհարկե, շատ շնորհակալ եմ, բայց կուզեի, որ իմ մանկությունը չլիներ դրսից եկած նվերներով, կուզեի Հայաստանից ստանալ այդ «նվերը», կուզեի դա լիներ, օրինակ՝

there would be shootings and that the lights would be switched off as a safety measure. Consequently, we made it a point to complete our homework in daylight to avoid the need to rely on candlelight later on. All this seemed normal to us, and it's only today that I realize certain things. They would never shoot on New Year's day, instead both their side and ours would fire guns into the air. Tracer bullets were fired to imitate fireworks.

There were often cases when shootings would interrupt the learning process. Sometimes, we had to miss classes for days. Once they would start shooting, we would seek refuge in the basement or in the house. I distinctly recall one particular incident during our final year of school; it was in the evening, we were rehearsing our graduation ceremony and they started firing directly at the school building. The whole class rushed to the basement, singing and making jokes together as we continued rehearsing the ceremony in the darkness. It was ridiculous: they were firing at us, while we were singing and laughing.

The war left a profound psychological impact. I often found myself contemplating my identity, my future path and how I could make a positive difference in my village. Being a border village, we were classified as a "suffering" community, and thus, we would often receive aid in the form of boxes, put together by children from countries like Canada for children like us affected by

դասագրքերի տեսքով: Մենք դպրոցում սովորում էինք նույն դասագրքերով, ինչ Երևանում, բայց հաճախ դասագրքերը չէին բավականացնում, ու ստիպված էինք լինում 2-3 հոգով մի դասագրքով սովորել: Հիշում եմ՝ յոթերորդ դասարանում էինք սովորում. մենք 15 աշակերտ էինք, ու այդ տարի կար գրականության ընդամենը 3 դասագիրք, և ծնողներս, որ շատ էին կարևորում կրթությունը, ինձ համար այդ գրքից գտան Իջևան քաղաքից:

Ինդիր էր նաև դասագրքերի գումարի հարցը: Երբ, օրինակ, ծնողը դասագրքերի համար չէր վճարում, ուսուցիչները գալիս էին ու հենց դասարանում հայտարարում, որ այս կամ այն աշակերտի ծնողները չեն վճարել գումարը: Վերջինս երբեմն մեծ բան էր մեր ծնողների համար, ու նրանք պայմանավորվում էին, որ խաղողը հանձնելուց հետո կվճարեն: Ես կուզեի «նվեր» ստանալ ոչ թե փափուկ խաղալիք կամ նոթատետր, այլ տեսնել պետական քաղաքականություն և տեղին որոշումներ: Ես չէի հաշտվում այն երևույթի հետ, երբ մարդիկ սպասում էին, թե երբ են օգնություն ստանալու: Դա, խնդիրը լուծելու փոխարեն, պարզապես մեղմում էր հետևանքները: Ես տեսնում էի, թե ինչպես են մեր համագյուղացիները խուսափում աշխատելուց և սպասում, որ իրենց հերոսացնեն: Այդ ամենը ինձ բարդութափոխում էր:

Իմ ծննդավայրի սահմանամերձ լինելը մեծապես ազդել է իմ մասնագիտական կողմնորոշման վրա: Ես ուզում էի գրել բանակի, սահմանի ու սահմանային համայնքների մասին և ընտրեցի լրագրությունը, մասնավորապես՝ ռազմական լրագրությունը: Ինձ համար

conflict. There would be pens, toys and other presents in those boxes. We would get very excited and of course, I was very grateful but I wished for my childhood not to be supported by foreign gifts. Rather I would have preferred to receive those gifts from Armenia and for them to be in the form of textbooks, for example. We studied with the same textbooks as they did in Yerevan, but often, there would not be enough textbooks and we had to share them between 2 or 3 people. I recall being in the 7th grade; there were 15 students in our class that year and there were only 3 Literature textbooks available for the entire class. My parents, who deeply valued education, managed to find a textbook for me from the town of Ijevan. Paying for the textbooks posed an additional challenge. If your parents hadn't paid for the textbook, the teachers would have made a point to announce it in front of the whole class. This put financial strain on our parents, who would often have to reach an agreement to pay for the textbook after selling their grape crop. I longed for a more substantial approach with proper state policies and sound decisions rather than relying on gifts like stuffed animals or notebooks. Witnessing people consistently looking forward to receiving aid was disheartening. The aid provided mere temporary relief to the consequences of conflict, without addressing the root issues. I observed how some fellow villagers avoided putting in enough effort and instead

շատ դժվար էր համալսարան ընդունվելը։
Ես չէի պարապում կրկնուսույցների մոտ,
ամեն բան ինքնուրույն էի անում։ Հայոց
լեզուն սովորելու իմ հիմնական միջոցը գյուղի
խարխուլ գրադարանի հին գրքերը կարդալն
էր, որոնք այնքան հին էին, որ վաղուց չէին
համապատասխանում լեզվի կանոններին։

Համալսարան ընդունվեցի երկրորդ փորձից։

Առաջին տարին չհաջողվեց անվճար
ընդունվել, քանի որ քննական որոշ
առարկաների բավականաչափ պատրաստ
չէի։ Հիմնական խնդիրը մեդիա դաշտին
ու մեդիա գործիչներին ծանոթ չլինելն էր։
Համացանցի հասանելիություն չունեինք, ու
ես մեդիա բովանդակությանը ծանոթանում
էի միայն թերթերի ու հեռուստացույցի
միջոցով։ Սակայն հաջորդ տարի ավելի
ինքնավստահ ու պատրաստված գնացի,
հանձնեցի քննություններս ու կարողացա
ընդունվել։ Համալսարանում հաճախ էի
զգում իմ դպրոցական կրթության բացերը։
Ես ստիպված էի սովորել այն ամենը, ինչը
դպրոցում սովորելու հնարավորություն չէի
ունեցել, ու ինձնից ավելի շատ ժամանակ
ու էներգիա էր պահանջվում սովորելու
համար։ Հետագայում արդեն ստիպված էի
զուգահեռաբար աշխատել։ Մինչև իմ ուսանող
դառնալը հայրս խաղողագործությամբ էր
զբաղվում։ Երբ ես ու եղբայրս արդեն ուսանող
էինք, խաղողի այգիները ու հողամասերը
հաճախ էին կրակահերթերի տակ հայտնվում,
ու ծնողներս հնարավորություն չունեին
իրենց գործով զբաղվելու։ Ես ստիպված էի
միաժամանակ սովորել և աշխատել, որպեսզի
կարողանամ ուսման վարձն ինքնուրույն

relied on others to idolize them. Witnessing this dynamic left me feeling conflicted and burdened with a sense of inadequacy.

The proximity of my village to the border had a profound impact on my career orientation. I felt a strong calling to write about the army, the border region, and the communities living nearby. Therefore, I chose to pursue journalism, with a particular focus on military journalism. However, gaining admission to university was a challenging endeavor for me. Unlike many others who had access to private tutors, I had to rely on my own determination and efforts. The lack of resources was evident, especially when it came to studying the Armenian language. The decrepit library in our village held only old books, which no longer adhered to contemporary linguistic standards.

During my first attempt of gaining admission, I was unable to secure a free spot due to my lack of readiness in certain examined subjects. The main obstacle was my limited exposure to the media field and its tools, as we didn't have internet access. Instead, I had to rely on newspapers and TV to familiarize myself with media content. However, in my second attempt I was much more confident and prepared, so I passed all the exams and gained admission.

At the university, I often found myself confronted with the shortcomings of my school education. I had to compensate for what I missed at school, making the learning process more time-consuming and energy-

հոգալ: Կյանքում միշտ ստիպված եմ եղել պայքարել, կռիվ տալ ու նորը փորձել: Երբ ուզում էի լրագրող դառնալ, մտածում էի, որ կգնամ, կխոսեմ, կպատմեմ, աշխարհը կիմանա ու կօգնի մեզ. եթե խոսենք մեր պատերազմի մասին, կկարողանանք փոխել ինչ-որ բան: Հիմա էլ եմ եդպես մտածում, բայց հասկացա նաև, որ ուզում եմ գնալ խնդիրները լուծելու հետևից, ոչ թե դրանց մասին բարձրաձայնելու: Այդպես որոշեցի միանալ «Դասավանդիր, Հայաստան» ծրագրին ու դասավանդել Հայաստանի ու Արցախի համայնքներում, լուծել կրթական խնդիրներ ու բերել թարմություն: 2016 թվականի Ապրիլյան պատերազմը պատճառ դարձավ Արցախ գնալու իմ որոշման:

Ես գնացի Քաշաթաղի ամենահյուսիսային համայնքներից մեկը՝ Վաղազին: Քաշաթաղի դպրոցում դասավանդում էի հայոց լեզու և գրականություն: Այդ դպրոցը երևի աշխարհի ամենափոքր դպրոցներից մեկն էր. 11 աշակերտ կար ամբողջ դպրոցում: Դասարաններ կային, որ ընդհանրապես աշակերտ չունեին, դասարաններ էլ կային, որտեղ երեք տարբեր դասարանների աշակերտներ էին: Ու երբեմն ես ստիպված էի մեկ դասաժամի ընթացքում երեք տարբեր դասընթացներ անցկացնել, ու արդյունքում երեխաները կարող էին ստանալ գիտելիքի մեկ երրորդը միայն: Մենք հաճախ տարբեր մեթոդներ էինք կիրառում, որ կարողանանք ավելին անել: Եթե համեմատելու լինեմ Կարմիրաղբյուրի ու Վաղազինի դպրոցները, ապա կասեմ, որ ընդհանուր առմամբ դրանք նման էին: Երբեմն էստեղ էլ էր լինում

intensive for me. Moreover, later on I had to juggle my studies with work. Prior to my becoming a student, my father was involved in viticulture. However, when my brother and I became students, our family's vineyards and lands were often the target of shootings, preventing my parents from doing their work. I had to juggle both studying and working to pay for my own tuition. Life always seemed like a constant battle, pushing me to explore new opportunities.

When I aspired to become a journalist, I believed that by sharing stories and experiences, the world would come to know and support us. I felt that talking about our war could bring about change. While I still hold on to this belief, I also realized my desire to be more than just a voice for the issues. I wanted to actively address and resolve the problem. That's when I made the decision to join the "Teach For Armenia" project, aiming to teach and make a difference in the communities of Armenia and Artsakh, particularly in the realm of education. My goal was to contribute positively, bring a sense of renewal, and address educational challenges. The April war in 2016 served as catalyst for my decision to move to Artsakh.

Upon relocating to Vaxazin, one of Qashatagh's northernmost communities, I took on the role of teaching Armenian Language and Literature at the local school. It was an exceptionally small school, maybe among the tiniest in the world, with only 11 students in total. Some classrooms had no students

դասագրքի խնդիր, հաճախ ինքս դասագիրք չէի ունենում ու օգտվում էի առցանց գրքերից: Վաղազինում լուրջ խնդիր էին ինտերնետն ու լույսը, որ անընդհատ անջատվում էին ու խափանվում, ուստի երբ լույս ու ինտերնետ էի ունենում, փորձում էի պլանավորել առաջիկա շաբաթը ու ներբեռնում ամեն ինչ: Երեխաները երբեմն բաց էին թողնում դասերը, որովհետև աշխատում էին, ինչ-որ գյուղատնտեսական աշխատանքներ էին անում: Հիշում եմ մի անգամ երեխաներից մեկը չէր կարողանում դասի գալ, արդեն մի քանի օր բացակայում էր, որովհետև պիտի արոտավայրում իրենց ոչխարները պահեր: Մենք որոշեցինք դասարանը տեղափոխել արոտավայր, որ ինքն էլ կարողանա մասնակցել դասին ու ոչինչ բաց չթողնի: Բարեբախտաբար, ես շատ բացառիկ համայնքում էի, որտեղ դպրոցը, տնօրենությունը, ուսուցիչները շատ բաց էին ու ողջունում էին փոփոխությունները: Վաղազինում ուսուցչի իմ աշխատանքն ավարտվեց 2019 թվականին, բայց 2020-ի օգոստոսին ես կրկին գնացի Արցախ՝ արդեն որպես Արցախի ուսուցիչների համակարգող: Վաղազինի երեխաների ու ընդհանուր համայնքի հետ ես փորձում էի կապը պահել: Երբ պատերազմը սկսվեց, ես Ստեփանակերտում էի, արդեն ուսուցիչ չէի, բայց մշտապես կապի մեջ էի մեր ուսուցիչների հետ: Սեպտեմբերի 27-ից Ստեփանակերտը թիրախի տակ էր. մենք հավաքվել էինք դպրոցի նկուղում երեխաների ու ծերերի հետ: Պատերազմի ժամանակ կյանքն անցնում էր նկուղներում, ու բոլորը փորձում էին ապաստարաններում անգամ շարունակել իրենց գործը: Ուսումնական

at all, while others had just three students from different grades. This unique situation led me to face the challenge of teaching three different materials during a single class hour, resulting in the pupils receiving only a third of the necessary material.

To maximize our efforts, we frequently employed various methods. When comparing the schools of Karmiragyux and Vaxazin, I found many similarities. Textbook shortages were not uncommon in both places, compelling me to resort to online versions when physical copies were unavailable. Moreover, the limited access to the internet and electricity posed additional challenges, as these resources often experienced disruptions and failures. Whenever I managed to have access, I would diligently plan for the upcoming week and download all necessary materials to cope with the intermittent connectivity. The children occasionally missed classes due to their involvement in agricultural work. I vividly recall one instance when a student couldn't attend class for several days because they had to tend to the sheep flock in the fields. In response, we decided to bring the classroom to the field, ensuring they could participate and not fall behind. The flexibility and open-mindedness of the school, principal, and teachers in this unique community made such innovations possible. After completing my role as a teacher in Vaghazin in 2019, my journey continued in August 2020 when I returned to Artsakh,

տարին նոր էր սկսվել, և մենք փորձում էինք նկուղում դասապրոցեսն անցկացնել: Շատ փոքրիկների համար էլ հեքիաթներ էինք կարդում, որ ավելի քիչ լսեն դրսի ձայները ու չվախենան:

Ես Արցախում եմ եղել այնքան ժամանակ, քանի դեռ այն ուսուցիչները, որոնց աշխատանքը համակարգում էի, չէին լքել իրենց համայնքները: Մի գիշեր, երբ մեր ուսուցիչներից մեկը՝ վերջինը, ասաց, որ գնում է, խնդրեց, որ մենք էլ գնանք: Արդեն երեխաներին տարհանել էին, ու իմ՝ նկուղում մնալն անիմաստ էր դարձել: Ես ոչ մի բան չէի անում ընդհանուր առմամբ, ևս մեկ տուն էի, որտեղ պետք էր հաց հասցնել, ու կարծես ավելի շատ խանգարում էի: Ես գնացի Արցախից: Իմ գնալը, սակայն, մինչև հիմա ինձ տանջում է. ես ինքս չեմ կարողանում դա արդարացնել:

Երբ շրջափակումը սկսվեց, ես Երևանում էի, եկել էի աշխատանքային հանդիպման, և վերադարձի ճանապարհին, երբ հասել էինք Սիսիան քաղաք, իմացանք, որ ճանապարհը փակել են: Մեզ հետ բազմաթիվ երեխաներ կային, որոնք Արցախից եկել էին Երևան տարբեր նպատակներով. մի խումբը «Մանկական Եվրատեսիլին» էր ներկա եղել, մյուսները՝ մրցույթների մասնակցել և այլն: Մոտ 50 երեխա էր մեզ հետ, ու մենք մտածում էինք հասնել Գորիս ու սպասել՝ մինչև ճանապարհը բացվի: Սակայն անցել է 8 ամիս, իսկ ճանապարհը դեռ փակ է:

Շրջափակման պայմաններում մենք պետք է արագ արձագանքեինք կրթական պրոցեսը իրականացնելու հարցերին: Գորիսում

this time as a coordinator for Artsakh teachers. Despite my new responsibilities, I made a conscious effort to maintain communication with my former pupils in Vaghazin and stayed connected with the community as a whole.

When the war erupted, I found myself in Stepanakert, no longer a teacher but still maintaining close communication with our fellow educators. As of September 27, the city was already facing direct attacks, and we sought refuge in the school basement, accompanied by children and elderly individuals. Despite the challenging circumstances of war, life persisted within the confines of the basement, and we endeavored to maintain a sense of normalcy. Even amid the chaos, we strived to uphold the learning process for the children. In the midst of ongoing hostilities, we managed to organize educational activities in the basement and provided solace to the younger kids by reading them fairy tales, attempting to divert their attention from the unsettling sounds of gunfire and violence.

I remained in Artsakh until the very last teacher, whom I was coordinating, decided to depart their community. It was a difficult night when the last teacher informed us of their departure and urged us to leave as well. The children had already been evacuated, and my presence in the basement seemed pointless. I felt like an additional burden, merely adding to the challenges faced by those still there. Ultimately, I made the

մնացած երեխաների հետ կազմակերպեցինք փոքր միջոցառում. աշխատում էինք նրանց հետ, որ կրթական միջավայրից դուրս չմնան, շատ բան բաց չթողնեն: Դա կարճ տևեց, որովհետև հնարավոր եղավ երեխաներին Կարմիր խաչի օգնությամբ տեղափոխել Ստեփանակերտ: Մենք ինքներս չկարողացանք գնալ այնտեղ, իսկ հետագայում Արցախ գնալն էլ ավելի բարդացավ:

Արցախի մեր ուսուցիչների համար հիմա շատ ծանր է: Նրանք պետք է մոռանան, որ իրենք էլ են շրջափակման մեջ, ու չպետք է ցույց տան իրենց հուսահատությունը, վախն ու ընկճվածությունը: Ձմռանը գազի ու հոսանքի անջատումների պատճառով երեխաները չէին կարողանում դպրոց գնալ, և ուսուցիչները հաճախ փոքր խմբերով աշակերտներին տուն էին կանչում ու վառարանների մոտ դաս անցկացնում: Ուսուցիչները փորձում էին երեխաների համար առավելագույնս անել, թեկուզև՝ ոչ ֆորմալ կրթության տեսքով:

Հիմա ես չգիտեմ՝ կկարողանամ աշխատել Արցախում, թե՞ ոչ: Երկամյա ծրագիրն ավարտվում է, և քանի որ մենք այս տարի չենք կարողանում Հայաստանից գնալ Արցախ, չենք էլ կարողանում շարունակել մեր աշխատանքը: Սա իմ որոշումը չէ, ուղղակի մենք չգիտենք՝ երբ կբացվի միջանցքը, և հնարավոր կլինի՞ արդյոք հասնել Արցախ, թե՞ ոչ: Հիմա տրամադրությունները շատ հակասական են. աշակերտները երբեմն մտածում են՝ «ինչի՞ համար սովորեմ. երբ ես լավ էի սովորում, մեկ ա, պատերազմ եղավ, ինչի՞ անեմ, ինչ կարող եմ ես անել»: Կա աշակերտների մի

painful decision to leave Artsakh. However, even after leaving, the guilt and torment lingered within me. I still struggle to justify my departure.

When the blockade [of Artsakh imposed by Azerbaijan] began, I was in Yerevan to attend a work-related meeting. However, going back, upon reaching the town of Sisian, we were shocked to discover that the road ahead was closed off. With us were many kids from Artsakh, who had traveled to Yerevan for various reasons, such as participating in Eurovision and other competitions. There were around 50 kids in total, all waiting together. Initially, we planned to make our way to Goris and wait there until the road reopened, but after 8 months, it became evident that the blockade would persist for much longer. Reacting proactively to the situation, we took charge of organizing the learning process for the kids who remained in Goris so that they wouldn't miss out on their education. This situation didn't last long, as it became possible to relocate the kids to Stepanakert with the assistance of the Red Cross. However, our own ability to travel to Stepanakert and other areas in Artsakh became increasingly complicated over time. Teaching in Artsakh poses immense difficulties for our teachers. They had to summon the strength to forget about being under the blockade and ensure that hopelessness, fear, and depression never surfaced in front of the students. Winter brought its own set

խումբ էլ, որ ուզում է հաղթել պատերազմը,
սովորել ու ավելի լավը դառնալ, ավելի լավ
հասարակություն ստեղծել: Հիասթափության
ալիքը գալիս է հիմնականում մեծերից, իսկ
երեխաներն ավելի դրական են ու հուսադրող:
Նրանք մտածում են, որ եթե լավ սովորեն,
կկարողանան հաղթել պատերազմին:

of challenges, with power outages making it impossible for kids to attend school. Undeterred, teachers would gather the students in small groups and teach them near stoves in their homes. Despite the lack of formal settings, the teachers were dedicated to providing the best education possible under such trying circumstances.


The uncertainty surrounding the current situation in Artsakh has left me unsure about the possibility of continuing my work there. As the 2-year program nears its end, the inability to travel to Artsakh from Armenia this year has become a significant hurdle. Unfortunately, it's not within my control, as we still don't know when the Lachin corridor will open and if reaching Artsakh will be possible.

Conflicting sentiments now prevail among the students. Some feel disheartened, believing that their previous efforts in studying were futile since war still happened, leaving them feeling powerless to make a difference. On the other hand, another group of students remains determined to overcome the war and believes that studying and self-improvement are essential for building a better society. Interestingly, the wave of disappointment is more often observed among adults, while children exhibit a remarkable level of optimism and positivity. They firmly believe that excelling in their studies can contribute to the effort of overcoming the war.

Serine Avetisyan
Education Expert



Սերինե Ավետիսյան
Կրթության փորձագետ



Կոժվարանամ ասել՝ որքանով է դիմակայուն մեր կրթական համակարգը պատերազմից հետո: Քովիդի ժամանակ, երբ հատուկ բանաձևով գնահատվում էր, թե որքանով է պետությունն արագ արձագանքել մարտահրավերներին և արդյունավետ քայլեր ձեռնարկել կրթության կազմակերպման համար, Հայաստանը աշխարհում բավականին լավ դիրքերում էր: Սակայն սա զուտ թվային դաշտում է և վերաբերում է կրթության լոգիստիկ կազմակերպմանը: Միգուցե zoom-ին անցումը արագ է կազմակերպվել, ուսուցիչները վերապատրաստվել են և այլն, սակայն թե երեխաներն ինչքանով են մասնակցել դասապրոցեսին կամ որքանով են տիրապետում նյութին, դժվար է ասել: Բովանդակային առումով գնահատում իրականացնելու համար ժամանակ և նյութական ռեսուրսներ են անհրաժեշտ: Պատերազմի դեպքում էլ նույնն է. եթե անգամ Արցախից Հայաստան տեղափոխված երեխաների կրթական գործընթացը լավ է կազմակերպվել, որքանով են երեխաները այդ ծանր հոգեբանական վիճակում յուրացրել ուսումնական նյութը՝ հնարավոր կլինի պարզել միայն առավել խորքային հետազոտությամբ:

Հայաստանի կրթական համակարգում ցիկլային խնդիրները շատ են՝ մեկը մյուսի հետ կապված, մեկը մյուսի վրա ազդող, և որևէ մեկի լուծումը ամբողջ համակարգի բարեփոխում չի ենթադրում: Սա անընդհատ բարելավվող գործընթաց է: Այս խնդիրներն առկա են եղել պատերազմից առաջ և շարունակում են արդիական լինել պատերազմից հետո:

It's hard to tell whether our post war educational system is resilient or not. Armenia ranked well worldwide in terms of how quickly and effectively the state addressed the challenge of organising education during Covid-19. However, this is solely a quantitative assessment and refers to the logistics of education. Perhaps the transition to zoom occurred quickly and teachers were respectively trained etc., but it is difficult to assess to what extent students engaged in the learning process or how well they mastered the learning material. A qualitative assessment requires time and material resources. The same applies in case of war: even if the teaching logistics for children, who moved from Artsakh to Armenia, was properly taken care of there is need for in-depth research to find out how much children were able to retain the material, given their dire psychological state.

There are many cyclical issues in Armenia's educational system: these are interconnected and influence one another. Solving one issue doesn't imply reforming the entire system. It is a continuously improving process. These problems existed before the war and they remain relevant after the war.

The primary issue is the lack of quality education. I associate the latter with two main factors: first and foremost, capable teachers. Unfortunately, very often people who are not able to get into their preferred

Առաջնայինը որակյալ կրթության խնդիրն է: Վերջինս երկու հիմնական գործոնի հետ եմ կապում. նախևառաջ՝ կարողունակ ուսուցիչներ: Ցավոք, հաճախ մանկավարժական համալսարան ընդունվում և ուսուցիչ են դառնում այն մարդիկ, որոնք, դիցուք՝ կտրվել են Երևանի պետական համալսարանի՝ իրենց նախընտրած ֆակուլտետներից, այսինքն՝ ի սկզբանե այս մարդիկ ուսուցչի առաքելության չեն ձգտում: Ոմանք չեն վերադառնում հայրենի գյուղ կամ քաղաք, իսկ նրանք, ովքեր սոցիալական խնդիրների պատճառով չեն կարողանում մնալ մայրաքաղաքում, ստիպված են վերադառնում և աշխատում տեղի դպրոցում՝ առանց մոտիվացիայի, ինչի պատճառով կրթության որակը հաճախ տուժում է: Մյուս գործոնը պրակտիկ կրթությունն է: Երեսուն տարուց ավելի մենք սովոր ենք եղել տեսական կրթության. խոսքը թե՛ դպրոցների, թե՛ համալսարանների մասին է: Թե՛ հասարակագիտական, թե՛ բնագիտական առարկաների դեպքում փորձարարական հատվածը բավարար չէ. մենք շատ քիչ հնարավորություններ ենք տալիս սովորողներին՝ կարդալու, ստեղծագործելու, սեփական կարծիք ձևավորելու, վերլուծելու, դասագրքում գրվածը գործնականորեն տեսնելու համար:

Պետությունն այս խնդիրներին երկու հիմնական ձևով է արձագանքում: Նախ՝ այն հնարավորություն է տալիս ուսուցիչներին՝ ամեն տարի կամավոր ատեստավորում անցնելու, որը ստուգում է նրանց մասնագիտական (ոչ մանկավարժական)

academic programs at, say, Yerevan State University, end up enrolling at the State Pedagogical University, that is, from the beginning, many of these people have no intention of becoming teachers. Some of them don't return to their home town or village, while those who are unable to stay in the capital due to socio-economic issues, are forced to return and work at local schools without any motivation. Because of this, the quality of education often suffers. The other factor is practical education. For more than 30 years, we have been accustomed to theoretical education: I am referring to both schools and universities. Experimental part of social and natural sciences subjects is insufficient: we provide students with few opportunities to read, create, formulate their own opinions, analyse, and apply the textbook material in practice.

The state addresses these problems in two main ways: firstly, it allows teachers to pass voluntary certification every year, which tests their professional (non-pedagogical) knowledge. Provided they receive enough points, the state reviews their current salary. This, basically, solves the problem of remuneration. The low salary is one of the main reasons for the lack of motivation among teachers. The certification program has been tested for two years: even though there are complaints about the process (e.g. the poor quality of tests, corruption risks, etc), many teachers have applied, and I know that there are people who

գիտելիքները, և բավարար միավորներ հավաքելու դեպքում աշխատավարձը վերանայվում է: Սրանով, ըստ էության, վարձատրության հարցն է լուծվում: Ուսուցիչների ցածր աշխատավարձը մոտիվացիայի բացակայության հիմնական պատճառներից մեկն է: Այս ծրագիրը երկու տարի է՝ ինչ փորձարկվում է. չնայած գործընթացից բողոքներ առկա են (թեստերի վատ որակ, կոռուպցիոն ռիսկեր և այլն), մեծ թվով ուսուցիչներ դիմել են, և գիտեմ, որ կան մարդիկ, որ ավելի բարձր աշխատավարձ են ստանում ատեստավորման արդյունքում: Բացի սա՝ կառավարությունը մասնակիորեն կամ ամբողջությամբ պետական ֆինանսավորմամբ դպրոցներ է հիմնանորոգում կամ կառուցում նորերը, ինչպես նաև փորձում է լուծել ջրի հասանելիության հարցը շենքերում:

Տեսական կրթությանն առնչվող խնդրին արձագանքելու համար պետությունը վերանայել է հանրակրթության պետական չափորոշիչները: Այս փաստաթուղթը շարադրում է այն սկզբունքները, որոնցով պետք է սահմանվեն բոլոր առարկաների չափորոշիչները, վերջնարդյունքները, առարկայացանկերը և ժամաքանակները: Չափորոշիչների վերանայման քաղաքականության հիմքում երկու պահանջ է դրվել. առաջինը տեսականից գործնականի անցումն է: Նպատակ է դրվել առարկաները հնարավորինս կապելու իրական կյանքի հետ, որպեսզի սովորողին հասկանալի լինի՝ ինչին է ծառայելու ստացած գիտելիքը: Մյուս կարևոր պահանջը բեռնաթափումն է. առարկայական

receive higher salaries as a result of passing the certification. In addition to this, the government fundamentally renovates schools or builds new ones either through partial or complete state funding, as well as tries to solve water accessibility issues in the buildings.

To address the problem concerning theoretical education, the government has reviewed the State standards of general education. This document sets out the principles, which in turn define standards, final outcomes, syllabi and timetables of school subjects. There are two requirements underlying the policy of reviewing state standards. A goal has been set to connect subjects with real life as much as possible so that the learner can understand the practical value of acquired knowledge. The other important requirement is the unloading of syllabi, which implies elimination of certain topics and reduction of requirements at the outcome level. This also aims to allow learners to devote more time to experimentation.

Besides quality education, I have to emphasise the importance of accessibility in education. From a legal point of view, Armenia switched to the universal design for learning which implies inclusivity in a broader sense. That is, the target is not only children with limited abilities but also those with exceptional abilities, representatives of different social groups, those living in areas near the border, etc. It is again difficult

ծրագրերից շատ թեմաներ ուղղակի հանվել են, իսկ վերջնարդյունքների մակարդակում պահանջները նվազել: Բեռնաթափումը նույնպես միտված է նրան, որ սովորողները ավելի շատ ժամանակ տրամադրեն փորձարարությանը:

Որակյալ կրթության կարևորությունից զատ՝ պետք է շեշտեմ նաև կրթության հասանելիության մասին: Եթե իրավական տեսանկյունից ենք նայում, Հայաստանը համընդհանուր ներառական կրթության է անցել, որը ենթադրում է ներառականություն լայն իմաստով: Այսինքն՝ թիրախում միայն սահմանափակ կարողություններով երեխաները չեն, այլ նաև բացառիկ ունակությունների տեր երեխաները, սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչները, սահմանամերձ բնակավայրերում ապրողները և այլն: Թե որքանով է այս մոդելը լավ աշխատում, գործնականում կրկին բարդ է գնահատելը: Կազմակերպչական տեսանկյունից մի քանի օղակներ են ներառված: Նախարարությունից բացի՝ համայնքապետարանները և մարզպետարանները շատ մեծ դերակատարում և նշանակություն ունեն, որովհետև իրենք են քարտեզագրում երեխաների կարիքները և հասանելի աջակցության տեսակները: Այստեղ, իհարկե, սուբյեկտիվ գնահատման ռիսկ է առաջանում. մի դեպքում համայնքի ղեկավարը կարող է համարել, որ սովյալ երեխան կարիք ունի կոնկրետ տեսակի աջակցության, իսկ մեկ այլ համայնքում նույն կարիքներ ունեցող երեխան չստանա այդ աջակցությունը: Մեկ այլ խնդիր

to assess how well this model works in practice. From the organisational point of view, several agents participate in the process. Besides the ministry of education, regional and municipal governments play a big role because they are the ones documenting children's needs and the types of available support. Here, of course, the risk of subjective assessment may arise: in one region, the head of local government may decide that the child in question needs a certain type of support, while in another community, a child with the same needs may not receive that assistance.

Parental behaviour is another problem: in many cases, parents themselves contribute to child's exclusion from general education, forcing them to work and engage in various agricultural occupations. No serious steps have been taken in this regard. In the case of ethnic minorities, take the example of the yazidi community, the rate of girls' exclusion from general education is very high, even though such cases are often covered up: the certificates of completion are formally issued and the absences are not reported. When the state tries to intervene, they raise the argument that the state is interfering with their cultural life and violating their cultural rights as ethnic minorities. To this day, the state has tried to come to terms with the situation and refrain from interfering, even though, in my opinion, much more drastic measures should be taken to protect and realise the girls' right to education.

Է ծնողների վարքագիծը. շատ դեպքերում վերջիններս են նպաստում երեխայի՝ հանրակրթությունից դուրս մնալուն, ստիպելով աշխատել, տարբեր գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավվել և այլն: Սրա շուրջ լուրջ քայլեր չեն ձեռնարկվում: Ազգային փոքրամասնությունների դեպքում, եթե վերցնենք եզդիական համայնքի օրինակը, շատ բարձր է աղջիկների՝ հանրակրթությունից դուրս մնալու ցուցանիշը, չնայած նման դեպքերը հաճախ կոծկվում են. դպրոցներում ավարտական վկայականները ձևականորեն տրվում են, բացակայությունները չեն նշանակվում: Երբ պետությունը փորձում է միջամտել, այն փաստարկն է բարձրաձայնվում, որ պետությունը միջամտում է մշակութային կյանքին և ոտնահարում ազգային փոքրամասնության մշակութային իրավունքները: Մինչև այս պահը պետությունը փորձում է հաշտ լինել և ձեռնպահ մնալ, չնայած իմ սուբյեկտիվ կարծիքով պետք է ավելի կտրուկ քայլեր ձեռնարկվեն աղջիկների կրթության իրավունքը իրացնելու համար:

Չնայած առկա խնդիրներին՝ ընդհանուր առմամբ աղջիկների մասնակցությունը կրթական պրոցեսին առավել բարձր է: Սա պայմանավորված է մի քանի հանգամանքներով. նախ՝ աղջիկներն ավելի ազատ են կրթությունը շարունակելու տեսանկյունից, մինչդեռ տղաները կաշկանդված են՝ պայմանավորված բանակ գնալու պահանջով: Մյուս հանգամանքը սոցիալական գործոնն է. ընտանիք պահելու բեռը մեր հասարակությունում հաճախ տղամարդկանց է բաժին ընկնում, և


Despite the existing problems, in general, women's participation in the educational process is much higher. This has to do with several factors: firstly, women are freer to continue their education, while men are constrained by the mandatory military enlistment. The other factor is a social one: in our society, the burden of sustaining one's family often falls on the shoulders of men and the latter often resort to working abroad because, firstly, this is an example they have been served since childhood and secondly, it is a faster way of earning money. Meanwhile, higher education implies a greater investment in terms of time and finances. In my opinion, this is the reason why girls are more motivated to study than boys at school. This is of course a subjective conclusion.

Currently, I am involved in a project, where we develop teaching manuals on peacebuilding education and train teachers with them. The purpose of developing these manuals is to address the topic of peace. The new standard for the social science subject covers the topic of conflict, while leaving out peace. The standard also covers the topic of culture, public policy, and international relations. The manuals touch upon all these topics, with peace as a central theme in each one of them. For example, when we talk about cultural heritage, we discuss how culture can become a tool for conflict resolution or for establishing peace between two parties. The response of trainee teachers to the

վերջիններս հաճախ մեկնում են արտագնա աշխատանքի, որովհետև նախ մանկուց դա են տեսել, և երկրորդ՝ դա գումար վաստակելու ավելի արագ եղանակ է: Մինչդեռ բարձրագույն կրթությունը ավելի մեծ ներդրում է ենթադրում՝ ֆինանսների և ժամանակի առումով: Ըստ իս՝ այս է պատճառը, որ դպրոցում աղջիկներն ավելի մոտիվացված են՝ սովորելու, քան տղաները: Սա, իհարկե, սուբյեկտիվ եզրակացություն է:

Ներկայումս մի նախագծում եմ ներգրավված, որի շրջանակներում խաղաղաշինական կրթության ուսումնաօժանդակ ձեռնարկներ են մշակվում, ու դրանցով ուսուցիչների վերապատրաստում է իրականացվում: Ձեռնարկների մշակման նպատակն է անդրադառնալ խաղաղության թեմային: «Հասարակագիտություն» առարկայի նոր չափորոշիչը ծածկում է հակամարտության թեման, մինչդեռ խաղաղությունը դուրս է մնում: Չափորոշիչը ներառում է նաև մշակույթի թեման, պետական քաղաքականությունը, միջազգային հարաբերությունները, իսկ ձեռնարկը այս թեմաները ներկայացնելիս կարմիր գծի նման տանում է խաղաղությունը: Օրինակ՝ երբ խոսում ենք մշակութային ժառանգությունից, քննարկվում է, թե մշակույթն ինչպես կարող է դառնալ երկու կողմերի միջև խաղաղության հաստատման կամ հակամարտության լուծման գործիք:

Վերապատրաստվող ուսուցիչների արձագանքը նյութին շատ հետաքրքրական է: Մեզանում «խաղաղություն» եզրույթը շատ քաղաքականացված է և մեծ մասամբ կապվում է Արցախից հրաժարվելու հետ: Սա



ի սկզբանե դժվարացրել է մեր աշխատանքը: Սակայն երբ ուսուցիչների հետ միասին ենք սահմանում «խաղաղությունը», աշխատանքը հեշտանում է, և մարդիկ էլ գոհ ու տպավորված են լինում՝ հաճախ հետադարձ կապով ներկայացնելով՝ ինչպես աշխատեց ձեռնարկը դպրոցներում: Մեր վերապատրաստումներին մասնակցած ուսուցիչները, որոնց 80%-ը կանայք են, ՄԱԿ-ի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի մասին խոսելիս հաճախ շեշտում են, որ կանայք առավել հակված են ցանկացած կոնֆլիկտային իրավիճակի խաղաղ հանգուցալուծմանը, մինչդեռ տղամարդիկ շատ ավելի տաքարյուն են: Հաճախ բարձրաձայնվում է այն տեսակետը, որ անգամ ընտանիքներում կանայք հաշտարարներ են, և որ հենց կանայք են լինելու խաղաղություն բերողները:

manuals is very interesting. In our society, the concept of peace is very politicised and it is mostly associated with giving up Artsakh. This made our job difficult from the beginning. However, when we define "peace" together with the teachers, the job becomes easier, and people are satisfied and even impressed, often giving feedback about how the manual has worked at their schools. 80% of teachers who participated in our training were women, who, when talking about the UN agenda of "Women, peace and security", often stress that women are more inclined to peaceful resolution of any conflict, while men are more impetuous. The point of view is often raised that even in families, women are the mediators and that women will be the ones bringing peace.

Narine Vardanyan
Head of Education
Quality Assurance at the
International Scientific
and Educational Center,
National Academy
of Sciences (Ph.D. in
Philology)





Նարինե Վարդանյան
Բանասիրական
գիտությունների թեկնածու,
Գիտությունների
ազգային ակադեմիայի
Գիտակրթական
միջազգային կենտրոնի
կրթության որակի
ապահովման բաժնի
ղեկավար

Անկախության տարիներից սկսած՝ գիտության հանդեպ պատշաճ վերաբերմունք չի դրսևորվել, և դա է պատճառը, որ գիտնականի դերը երբեք չի արժևորվել: Շատ լավ հիշում եմ՝ երբ 90-ականներին և նույնիսկ 2000-ականների սկզբին երեխաներին հարցնում էին՝ «ինչ եք ուզում դառնալ», մեծ մասը պատասխանում էր՝ «պատգամավոր», «նախարար» կամ «բիզնեսմեն»: Խորհրդային Միությունում կարևորում էին գիտելիքի վրա հիմնված արտադրությունը, տնտեսությունը, իսկ հետպատերազմական, անկախացման շրջանում, ցավոք, սկսվեց ակադեմիական համայնքի անկումը: Շատերն ստիպված դուրս եկան գիտության ոլորտից՝ առօրյա կարիքները հոգալու նպատակով:

Պատերազմական և հետպատերազմական խնդիրների համատեքստում գիտությունը մղվել է երկրորդ պլան և չի ստացել պետության կողմից բավարար ֆինանսավորում և աջակցություն: Այս ամենը հանգեցրել է այնպիսի իրավիճակի, որ գիտության ոլորտը հատկապես երիտասարդների համար դադարել է գրավիչ լինելուց, քանի որ այն չի խոստանում տրամադրել շարունակական կարիերայի, սոցիալ-տնտեսական ապահովվածության երաշխիքներ: Վերջին տարիներին միայն պետությունը որոշ ծրագրերի միջոցով փորձում է վերակենդանացնել գիտական ոլորտը և ինչ-ինչ ուղղություններ խելքի բերել, բայց կուտակված խնդիրներն այնքան շատ են, որ առջևում ժամանակատար և ծախսատար գործընթացի ենք ականատես լինելու: Գիտության կոմիտեն արդեն ունի մշակված

Since the days of Independence, science has not received the level of respect it deserves, which has consequently led to a lack of proper appreciation for the role of scientists. I vividly recall the 90s and early 2000s when, if you asked a child what they aspired to become when grown up, the majority would respond "an MP", "a minister" or "a businessman." In contrast, during the Soviet era, there was a genuine value placed on knowledge-based production and economy. In the post-Soviet period, though, academia sadly witnessed a decline, and many talented individuals were compelled to leave scientific pursuits in order to make ends meet.

Amid the backdrop of war and post-war challenges, the field of science has unfortunately been pushed into the background, lacking adequate funding and support from the state. Consequently, the allure of pursuing a career in science has diminished, particularly for young individuals, as it fails to promise the assurance of a stable and economically secure path. Only in recent years, the state has taken steps to revive and advance various scientific fields through dedicated projects. However, due to lingering challenges, this process may require considerable time and effort. The State Science Committee has already implemented a well-developed grant policy, which, in my view, stands as one of the most remarkable manifestations of the advancements in the field of science in

դրամաշնորհային քաղաքականություն, որն իմ կարծիքով վերջին տարիներին ոլորտի զարգացման լավագույն դրսևորումներից մեկն է: Կան ասպիրանտական, երիտասարդ գիտնականների, նոր լաբորատորիաների հիմնման, արտասահմանյան գիտնականների ինտեգրման և այլ դրամաշնորհներ: Սա նշանակում է, որ գիտության աշխարհ մուտք գործող երիտասարդի համար ստեղծվել է հնարավորություն՝ բավարար չափով գումար վաստակելու և կարիերայի շարունակականություն ապահովելու համար:

Պետության կողմից նախկինում հաճախ էր հնչում այն միտքը, թե «տվե՞ք գիտական արտադրանք, և մենք կֆինանսավորենք ձեզ»՝ առանց գիտակցելու, որ այդ արտադրանքը մեկ-երկու օրվա կամ մեկ-երկու հետազոտության արդյունք չէ, այլ՝ երկարատև փորձարկումների, համադրումների, տվյալների վերլուծության և ներկայացման ժամանակատար գործընթաց: Խորհրդային տարիներին գիտական արտադրանքը ստեղծվում էր, հաշվետվություններով հանձնվում էր գլխամասային կոմիտե, և այնտեղ արդեն որոշում էին, թե այդ արտադրանքը որ երկրին, ինչպես և ինչ գնով պետք է վաճառել: Անկախ Հայաստանի գիտությունը կանգնեց խնդրի առաջ, որովհետև առևտրայնացումով զբաղվող կոնկրետ մասնագետներ չկային, և շատ երկար ժամանակ գիտնականն իր նորույթը չէր կարողանում հանրայնացնել և ներկայացնել շուկայում: Ներկայումս, կարծում եմ, այս խնդիրը որոշակիորեն լուծված է, քանի որ գիտնականներին տրվում

recent years. These grants aim to establish new labs, promote young scientists and PhD candidates, as well as attract foreign talent. As a result, the scientific world now offers numerous opportunities for young individuals to earn a sufficient income and build a promising career.

In the past, the prevailing state approach was "we will finance you if you deliver a scientific product." However, creating a meaningful scientific product involves a lengthy process of experimentation, data analysis, and presentation, often taking months or years to complete. During the Soviet period, the products were carefully evaluated by higher authorities and then sold to other countries at set rules and prices. The scientific community of independent Armenia encountered a significant challenge as there were no dedicated professionals involved in commercialization efforts. Consequently, scientists struggled for an extended period to publicize their innovations and bring them to the market. Nonetheless, there have been positive developments as scientists are being trained in how to effectively present their products and cater to market needs. An excellent example of this progress emerged during the COVID pandemic, where scientists at the Molecular Biology Institute in Armenia successfully created COVID diagnostic tests and handed them over to the state. This was one of the best examples of state-scientific community collaboration, underscoring the crucial

Են իրենց աշխատանքը, ձեռքբերումները և արտադրանքը ներկայացնելու գիտելիքը և գործիքները: Քովիդի ժամանակ մենք հնարավորություն ընձեռեցինք մեր Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի գիտնականներին, և նրանք քովիդ հիվանդության ախտորոշման թեստերը մշակեցին և հանձնեցին պետությանը: Սա պետություն-գիտություն համագործակցության լավագույն օրինակներից մեկն է, որը ցույց տվեց՝ պետք է հայ գիտնականին պարզապես վստահել:

Միջավայրի և հավասար հնարավորությունների տեսանկյունից ակադեմիական համայնքը զգալիորեն տարբերվում է բուհականից: Բուհում «էջեիզմ» ասվածը շատ լավ զգում էի, բայց հետո, երբ ընդունվեցի ասպիրանտուրա, հասկացա, որ այստեղ ոչ մեկն իմ հետևից չի ընկնում. տալիս են անհրաժեշտ գրականություն, ուղղորդում, թե որ լաբորատորիայի հետ է հնարավոր աշխատել, որ ուղղություններով համագործակցել: Ուսանողն ակադեմիական տիրույթում առավել ինքնուրույն է և գերծ պարտադրվող թեմաներից: Ազատականության միջավայր կա այստեղ, բայց նաև՝ պատասխանատվության:

Մուտք գործելով ակադեմիական շրջանակ՝ որպես կին չեմ բախվել սեռով պայմանավորված որևէ խտրականության, սակայն կան դժվարություններ և մարտահրավերներ՝ կապված կնոջ մեկ այլ՝ մայր լինելու դերի հետ: Որքան էլ կինը կայացած լինի որպես անձ և մասնագետ, միևնույն է, պետք է ինչ-որ պահի այդ ամենը մի կողմ դնի և զբաղվի

importance of placing trust in the expertise of our scientists.

The distinction between the academic community and the university is notable, particularly in terms of the environment and equal opportunities. During my time in the university, I encountered "ageism" very often. However, as I progressed into a PhD candidate, I experienced a significant shift. Here, I realized that I was no longer under anyone's controlling hand. Instead, my mentors provided me with the necessary literature and guided me on which laboratories to collaborate with and which directions to explore. This environment fosters a sense of liberation, yet it also comes with a sense of responsibility.

As a woman stepping into the realm of science, I haven't encountered any gender-based discrimination. However, I acknowledge that significant challenges do arise for women due to their traditional roles as mothers. When a woman becomes a mother, regardless of her career achievements, she often sets aside her professional pursuits to focus on raising her child. When it comes to traditional roles, men also face obstacles in the field of science, as it is typically characterized with low paid jobs; meanwhile our societal norms often place the burden of sustaining a family on men's shoulders.

The field of science is facing its share of problems and challenges as it strives to recover. Unfortunately, the impact of the recent war and post-war events has


Երեխայով: Դերերի բաշխման տեսանկյունից՝ տղամարդիկ գիտության մեջ նույնպես բազմաթիվ խնդիրների են բախվում. նրանք հասկանում են, որ գիտությունն ամենաքիչ ֆինանսավորվող ուղղություններից մեկն է, և չեն կարող հաշվի չնստել դրա հետ՝ պայմանավորված այն փաստով, որ մեր հանրության մեջ ընտանիք պահելու հիմնական բեռը դրվում է տղամարդու ուսերին:

Գիտության ոլորտը, իր բոլոր խնդիրներով և մարտահրավերներով հանդերձ, այժմ փորձում է վերականգնվել: Ցավոք, պատերազմը և հետպատերազմական իրադարձությունները որոշակիորեն խոչընդոտում են կյանքի տարբեր ոլորտների և, իհարկե, գիտության բարեփոխումը, զարգացումը: 2020 թվականի պատերազմը հասարակությանն ինչ-որ անզգայացում է հաղորդել, և ապատիայից դուրս գալը դժվար է: Սակայն կյանքը շարունակվում է, և պետք է փորձել հնարավորինս աջակցել՝ յուրաքանչյուրս մեր տեղում և դերում լինելով, որպեսզի որոշակի դրական արտադրանք ստեղծելով՝ շարժվենք առաջ և կարողանանք նպաստել պետության զարգացմանը: Այսօր ես միակ ելքը դա եմ տեսնում. պրոֆեսիոնալիզմ ամեն ինչում, ամեն մարդ իր գործն իր տեղում պիտի կարողանա լավագույնս անել:

somewhat hindered progress in various aspects of life, including science. The war of 2020 has left a sense of anesthesia in society, making it challenging to break free from apathy. Nevertheless, life continues, and it is essential for each of us, in our respective roles, to offer support and contribute positively to the development of the state. I firmly believe that the key to overcoming challenges lies in each individual's commitment to excel in their responsibilities and diligently fulfill their roles.

Nairi Khatchadourian

Art Historian, Curator,
Founding Director of “AHA
Collective”



Նայիրի Խաչատուրեան
Արվեստագրան, համադրող,
AHA collective-ի հիմնադիր
տնօրեն



Պատերազմը կտրուկ փոխում է արվեստի և մշակույթի կենսագործման ընթացքը և բերում է բազմատեսակ խնդիրներ և մարտահրավերներ. կաթվածահար են լինում ենթակառուցվածքները, խոչընդոտվում է հանրության հետ կապը, տեղահանումների հետևանքով խաթարվում կամ ոչնչացվում է տեղի արվեստի դաշտը: Ռազմականացման ստորադասող ստվերից արվեստը դուրս բերելու համար արվեստագետները պետք է գիտակցեն, որ «ազատությունը պետք է վերածվի պատասխանատվության», ինչպես մշտապես նշում է 2020 թ. Արցախյան պատերազմի մասնակից, արվեստագետ Դավիթ Քոչունցը, և իրենց ուրույն լեզվով ու համարձակությամբ արտահայտեն գլխիվայր շրջված իրականությունը: Պատերազմական իրավիճակում արվեստագետի, արվեստի և մշակույթի դերը հասարակությանը հավասարակշռության բերելն է՝ խնդրականացնելով, արտահայտելով, փոխակերպելով պատերազմի արհավիրքները և համախմբելով մարդկանց այնպիսի արժեքների շուրջ, որոնք կարող են այլընտրանքներ առաջարկել՝ թունելից դուրս գալու, տրավմայի մասին խոսելու և կյանքը վերարժևորելու համար: չենց արվեստն ու մշակույթն են կենարար ուժ տալիս, և կարևոր է, որ բոլորը պատասխանատու և հոգատար լինեն այդ արժեքների և այդ արժեքները ստեղծողների նկատմամբ, որոնք օգնում են հանրությանը հասկանալ և հաղթահարել կատարվածը: Արվեստագետն է, որ որպես զգայուն և վերլուծող առաջնորդ, ի վիճակի է արտահայտելու և լիցքաթափելու այլալված

War profoundly alters the trajectory of art and culture, giving rise to a multitude of issues and trials. It paralyses infrastructure, obstructs connections with the public, and disrupts or even destroys local artistic landscapes due to displacements. To emancipate art from the clutches of dominating militarism, artists must internalise that "freedom must transmute into responsibility," as aptly stated by David Kochunts, a 2020 Artsakh war veteran and artist. Artists bear the responsibility of portraying the topsy-turvy reality, leveraging their unique language and courage.

In a wartime context, the artist, along with art and culture, assumes the crucial role of restoring equilibrium to society. This is accomplished through a process of inquiry, manifestation, and metamorphosis, wherein the horrors of war are brought to the fore, uniting individuals around values that can proffer alternative paths for emerging from the abyss, talking about the trauma and rethinking life anew. Arts and culture infuse vitality, and it becomes imperative for all to embrace responsibility and compassion towards these cherished values and those who foster them. The latter play a vital role in helping the public comprehend and navigate through life's unfolding events.

Functioning as both a sensitive and analytical trailblazer, the artist possesses the capacity to express and discharge the tensions of anxious society, thereby fostering a secure platform for dialogue. In an environment

հասարակության լարումները և ապահով երկխոսության դաշտ ստեղծելու: Արվեստի աշխույժ դաշտի առկայության դեպքում արվեստը նաև քաղաքական փափուկ ուժ կարող է լինել դիվանագիտական ասպարեզում և կարող է լսելի դարձնել մեր երկրի ձայնը միջազգային հանրության համար:

Արվեստագետն իր դերը լիարժեքորեն կատարելու համար պետք է ապահովված լինի անհրաժեշտ ենթակառուցվածքներով և գործի համապատասխան միջավայրում: Առանց այս միջավայրի՝ արվեստագետները պատերազմական գերլարվածությանն արձագանքում են ծայրահեղ ձևերով. քար լռություն՝ կուտակված խիտ մտքերից ու հուզումից, կամ աղմուկ՝ դրդված զգացական պոռթկումով: Այս ծայրահեղ դրսևորումները կանխելու հարցում կարևոր դեր ունեն թանգարանները, գիտակրթական հաստատությունները, անհատ համադրողները: Նրանք պետք է ստեղծեն համապատասխան միջավայր, որտեղ, քար լռության կամ աղմուկի փոխարեն, արվեստագետներն ու մշակութային գործիչները հնարավորություն կունենան համարձակ, քննական ու սրտացավ մոտեցումներով արձագանքելու առկա վիճակին:

Ցավոք, 2020 թ. Արցախյան պատերազմի ժամանակ քիչ են եղել այդպիսի արձագանքները: Արվեստի մի շարք անհատական նախագծեր ստեղծվեցին՝ արհավիրքից տուժած և սահմանամերձ համայնքների հետ աշխատելու նպատակով: Սակայն մեծ մասամբ նախագծերն արվում են անհատական ջանքերով, կարճաժամկետ բնույթ են կրում և

rich with artistic activity, art further assumes the role of a diplomatic "soft power," echoing the nation's voice within the international arena.

To fulfill their pivotal role, artists must operate within a conducive framework of infrastructure and work environment. In the absence of these preconditions, artists react to wartime tensions in rather extreme fashion: a profound silence stemming from heavy contemplation and emotion, or a cacophonous eruption triggered by emotional outpouring. Museums, scientific and educational institutions, and individual curators wield significant influence in preventing these extreme responses. Their task lies in fostering an enabling environment where artists and cultural luminaries can engage with the prevailing circumstances through audacious, probing, and compassionate approaches.

Regrettably, during the 2020 Artsakh war, such responses were sparse. Several individual art endeavours emerged to engage with borderline communities affected by the catastrophe. Nevertheless, the majority of these initiatives have remained isolated efforts, characterised by their ephemeral nature and misalignment with overarching state policies. To catalyse meaningful discourse, all stakeholders in the field must partake in a concerted effort – involving expert dialogues, media resonance, public educational endeavours, and state-endorsed care and support. Without this multi-

պետական քաղաքականության օրակարգի մեջ լիարժեքորեն չեն ընդգրկվում: Դրանք խոսույթի վերածելու համար ոլորտի բոլոր դերակատարները պետք է ներգրավված լինեն գործընթացում (մասնագիտական քննարկում, մեդիա արձագանք, հանրության հետ կրթական աշխատանք, պետության հոգածություն և աջակցություն), հակառակ դեպքում արվեստը չի կարող ներթափանցել հանրային տիրույթ, դրսևորվել միջազգային հարթակներում և ձևավորել այլընտրանքային ուղիներ: Հրատապ է պետության հետ համակարգված ձևով և երկարաժամկետ մոտեցումների կիրառմամբ արվեստի՝ խոցելի համայնքներին ուղղված նախաձեռնություններ ծրագրելու և իրականացնելու հարցը: Պետությունն ունի ռեսուրս, խնդիրն այդ ռեսուրսը ռազմավարական առումով ճիշտ օգտագործելն է: Ժամանակն է, որ համապատասխան կառույցներն ու մասնագետները պատասխանատվություն դրսևորեն և հանրային ու ազգային շահերի մեկտեղման գիտակցումով բացեն իրենց հարթակները, որ արվեստագետներն ու մշակութային գործիչները հանրության տարբեր շերտերի հետ երկխոսեն առկա խնդիրների և լուծման տարբեր ուղիների մասին:

Սերկա իրավիճակում, երբ Արցախն 8 ամսից ավելի շրջափակման մեջ է, ցեղասպանության վտանգի շեմին, Հայաստանի ո՛չ պետական մշակութային հաստատությունները, ո՛չ արվեստի դաշտի անկախ հանրույթը որևէ առարկայական, հստակ քայլ չեն ձեռնարկել արցախահայության խոցելի բնակչության հետ աշխատելու և նրանց կողքին լինելու

dimensional involvement, art remains barred from entering the public domain, asserting itself on global platforms, and forging alternative pathways.

The urgency lies in meticulously orchestrating and executing art initiatives in tandem with state entities, under a cohesive and long-term strategy, tailored to assist vulnerable communities. While the state possesses the requisite resources, the challenge lies in their strategic and judicious deployment. The time has come for these institutions and experts to step forth with responsibility, unfurling platforms steeped in civic and national principles. This concerted effort shall enable artists and cultural stalwarts to engage diverse strata of the public, fostering dialogues on prevailing challenges and potential avenues of their resolution.

In the present dire circumstances, with Artsakh enduring over seven months of siege, standing perilously close to genocide, both state cultural institutions and the independent art community have failed to take comprehensive and distinct measures in support of the vulnerable Artsakh Armenian community. The inability to establish physical contact with Artsakh Armenians necessitates the exploration and implementation of fresh formats. These must ensure participation in digital art projects, the creation of alternative performance avenues, and the utilisation of artistic language to address the Artsakh blockade on international platforms.

ուղղությամբ: Արցախահայության հետ ֆիզիկական շփման անհնարինությունը պետք է մղի դեպի նոր ձևաչափերի մշակում և փորձարկում՝ թվային արվեստի ոլորտում նախագծերի մեջ մասնակցայնություն ապահովելով, այլընտրանքային փերֆորմանսների ձևաչափեր ստեղծելով, միջազգային կառույցներում Արցախի շրջափակման հարցն արվեստի լեզվով բարձրաձայնելով: Եթե մենք լուռ լինենք, աշխարհից ոչինչ չենք կարող պահանջել:

Արցախյան երկրորդ պատերազմը վեր հանեց նաև մեր պետական մշակութային քաղաքականության բազմատեսակ բացթողումները և ընդգծեց ռազմավարական տեսանկյունից անորոշությունը: Առաջնահերթ և ակնհայտ խնդիրներից էր մշակութային ժառանգության փաստագրման և ցուցակագրման բացը: Եթե պատերազմից առաջ Արցախի մշակութային ժառանգությունը լիարժեք փաստագրված լիներ՝ հնագիտական վայրերի, հուշարձանների, թանգարանների, արվեստագետների լիակատար տվյալներով, ապա պատերազմի ժամանակ տարբեր անջատ խմբեր՝ պետականից մինչև մասնագիտական, ընդհուպ՝ սիրողական/կամավորական, չէին զբաղվի նույն տվյալների շտեմարան պատրաստելու և միջազգային կառույցներին ու մեդիա դաշտին կցկտուր նյութեր տրամադրելու գործով: Պետությունը և պատկան մարմինները համակարգված կերպով պետք է ապահովեին մեր մշակութային ժառանգության անվտանգության հարցը և

Our silence leaves us bereft of the right to demand anything from the global community.

The second Artsakh war has underscored critical fissures in our state's cultural policy and exposed strategic uncertainties. A preeminent and glaring concern has been the absence of comprehensive documentation and cataloguing of our cultural heritage. Had Artsakh's cultural heritage been fully documented prior to the war, encompassing comprehensive data on archaeological sites, monuments, museums, and artists, various disjointed entities—ranging from governmental bodies to professional and even amateur/volunteer groups—would not have engaged in compiling databases and sharing them with international entities and media outlets in an incoherent manner. Pertinent state and affiliated bodies should have systematically safeguarded our cultural heritage, orchestrating collaborative efforts with the international community.

In the aftermath of the 2020 war, university-affiliated and scientific-educational initiatives yielded monitoring platforms that track the current state and changes in Artsakh's cultural heritage. These tools and research findings ought to be wholeheartedly embraced by state entities, who are to use them as empirical substantiation for their interactions with international organisations. Concurrently, they should serve as instruments of

միջազգային հանրության հետ տարվելիք աշխատանքը: 2020-ի պատերազմից հետո մի շարք համալսարանական և գիտակրթական նախաձեռնությունների շնորհիվ Արցախի մշակութային ժառանգության ներկա վիճակի ու փոփոխությունների մշտադիտարկման հարթակներ են ստեղծվել: Այս գործիքները և հետազոտական տվյալները պետական մարմինները լիարժեք պետք է օգտագործեն՝ ծառայեցնելով որպես գիտական ապացույց միջազգային կառույցների հետ աշխատելիս: Սրանք նաև պետք է դառնան իրազեկման գործիք՝ մեր ազգային արժեքների վտանգված լինելը բարձրաձայնելու, համասփյուռ հասարակության ճանաչողականությունը բարձրացնելու և պատկանելության գիտակցումը ամրապնդելու համար:

Պատերազմից հետո Սփյուռքի մի շարք կազմակերպություններ միջոցներ տրամադրեցին, որ Արցախի պատմության և մշակույթի մասին հետազոտություններ և գրքեր հրատարակվեն: Մի շարք հայ և օտար հետազոտողներ իրենց միջոցներով մեկնարկեցին նմանատիպ նախաձեռնություններ: Այնուամենայնիվ ԿԳՄՍ նախարարությունն այս անհատական ջանքերը պետք է «ցանցավորի»՝ դրանց ազդեցությունը բազմապատկելու և հարևան պետությունների կողմից պատմությունը նենգափոխելու ու վերաշարադրելու ծավալուն աշխատանքները կանխելու համար:

Արվեստի և մշակութային ժառանգության պաշտպանությունը հոգատար և համագործակցային մոտեցումներ է պահանջում՝ պետական մարմինների,

awareness, shedding light on the jeopardy our national treasures face, raising awareness transnationally (Armenia and Diaspora alike), and deepening the latter's collective sense of belonging.

Following the war, several Diaspora organisations provided funds to publish research and books detailing the history and culture of Artsakh. Both Armenian and foreign researchers undertook similar initiatives with their own resources. Nonetheless, the Ministry of Education, Science, Culture and Sport should orchestrate a "networked" scheme of these individual endeavours, amplifying their impact and thwarting wide scale attempts by neighbouring states to falsify and rewrite history.

The safeguarding of art and cultural heritage necessitates compassionate and collaborative efforts among government bodies, international organisations, museums, educational institutions, scholars, artists, and local communities. This responsibility should be collectively shared, and fostering communal consciousness and concerted action is imperative to conserve our artistic and historical legacy. It is incumbent upon these stakeholders to cultivate a dynamic public discourse about the perils at hand and provide the tools necessary to steer the preservation of our national heritage, both past and present. A pressing and attainable approach (given the advent of the IT realm) lies in

միջազգային կազմակերպությունների,
թանգարանների, կրթական
հաստատությունների, գիտնականների,
արվեստագետների և տեղական
համայնքների կողմից: Մշակութային
արժեքների պաշտպանությունն ընդհանուր
պատասխանատվություն է, և հավաքական
գիտակցումն ու գործողություններն են
կարևոր՝ գեղարվեստական և պատմական
ժառանգությունը պահպանելու համար: Նշված
դերակատարների պարտականությունն է
ակտիվ հասարակական դիսկուրս ձևավորել
վտանգների վերաբերյալ և ներկայացնել
այն գործիքակազմը, որով պետք է
առաջնորդվել՝ մեր ազգի հավաքական
անցյալի և ներկայի արժեքները պահպանելու
համար: Գործիքներից ամենահրատապի
ու հասանելին (նկատի ունենալով
տեղեկատվական տեխնոլոգիաների դաշտի
առկայությունը) փաստաթղթավորումը,
թվայնացումն ու արխիվացումն են:
Այնուհետև յուրաքանչյուր հաստատություն
իր հավաքածուների կառավարման
համակարգը պետք է ստեղծի, ինչը նրան
հնարավորություն կտա պատշաճ կերպով
հետևելու իր ունեցվածքին և վտանգի
դեպքում ճշգրիտ տվյալներով փորձելու
ապահովել հավաքածուի անվտանգությունն
ու կանխելու արվեստի և ժառանգության
նմուշների թալանն ու ոչնչացումը: Կրթության
և հանրային իրազեկվածության մակարդակի
բարձրացումը կարող է խրախուսել
պատասխանատվության և սեփականության
զգացումը և հարգանք սերմանել
արվեստի և պատմության նկատմամբ:

documentation, digitization, and archiving. Subsequently, each institution must establish a collection management system to prudently oversee its holdings, facilitating accurate data for potential responses during periods of peril. This strategy aims to ensure collection safety, thwart art and heritage plundering, and avert destruction. Elevating education and public awareness can nurture a sense of duty and ownership, nurturing reverence for art and history.

For sustained vigilance, the state should offer secure shelters and transport mechanisms for artworks and heritage pieces. Collaborative efforts with target institutions are vital to position these artefacts away from conflict zones, safeguarding them from harm and theft during wartime. Managed by skilled professionals, the internal security apparatus must be prepared to protect these assets in times of crisis, collaborating closely with international organisations.

In parallel with research, monitoring, and dissemination of information regarding standing, jeopardised, or decimated heritage, a paramount focus of state policy should be on nurturing contemporary artists. These creators, who are currently shaping intellectual expressions concerning unfolding events, will undoubtedly form an indispensable part of our nation's heritage in the future. Moreover, they will serve as a conduit for engaging and negotiating with the global community. There exists a need to produce contemporary content


Շարունակական մշտադիտարկման համար պետությունը պետք է թիրախային հաստատությունների հետ ապահովի արվեստի գործերի և ժառանգության նմուշների համար նախատեսված ապաստարաններ և տեղափոխման մեխանիզմներ, որ պատերազմի դեպքում հակամարտության գոտիներից հեռու ապահով վայրերում, կանխվեն նմուշների ոչնչացումն ու գողությունը: Ներքին անվտանգության համակարգն անպայման պետք է կառավարվի պատրաստված մասնագետների կողմից, և ճգնաժամի ժամանակ պաշտպանությանն ուղղված գործողությունները պետք է կատարվեն միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Կանգուն, վտանգված կամ ոչնչացված ժառանգության հետազոտման, մշտադիտարկման և հանրայնացման աշխատանքներին զուգահեռ՝ պետական քաղաքականության առաջնահերթությունը պետք է լինի այսօր ստեղծագործող արվեստագետներին աջակցություն ցուցաբերելը, որոնց մտավոր դրսևորումներն այսօր մեզ հետ տեղի ունեցող իրադարձությունների և աշխարհի հետ հարաբերությունների շուրջ վաղը կլինեն մեր ազգի ժառանգության մաս և միջազգային հանրության հետ հարաբերվելու և բանակցելու գործիք: Արդյունաբերական մասշտաբներով ժամանակակից բովանդակություն է պետք ստեղծել: Պետությունը պետք է լինի երեկվա, այսօրվա և վաղվա ստեղծվող ժառանգության տերը և ապագայի հեռանկարը կերտողը:


on an industrial scale. The state ought to be the steward of yesterday's, today's, and tomorrow's heritage, assuming the mantle of shaping future perspectives.



Tamar Shirinian
Cultural Anthropologist,
Researcher of Feminist
and Queer Theories



Թամար Շիրինյան
Մշակութային մարդաբան,
ֆեմինիստական և
քվիր տեսությունների
հետազոտող



Պատերազմը կյանքը միշտ ավելի խոցելի է դարձնում: Առաջնագիծ են գնում տղամարդիկ, և նրանք ավելի հաճախ են մահանում: Կանայք, սակայն, ավելի խոցելի են, քանի որ հենց նրանք պիտի շարունակեն կյանքը, որոշեն՝ ինչպես աշխատել, ինչպես կերակրել երեխային, հասցնել դպրոց, կազմակերպել երեխայի առօրյան, ինչպես դաստիարակել ու պաշտպանել նրան: Պատերազմական պայմաններում նաև մեծանում է բռնության ենթարկվելու ռիսկը, քանի որ բռնությունը չի մնում ռազմաճակատում, գալիս է տուն: Տղամարդը, որը վախենում է պատերազմելուց, կամ որը կռվել է ռազմի դաշտում, վերադառնում է բռնության ավելի մեծ հնարավորություններով, որոնք կարող են դրսևորվել ամենուր:

Հայաստանը մասկոպլին տարածք է: Կանայք հասկանում են դա, բայց չեն ձևակերպում և վերլուծում որպես խնդիր: Կանանց ընկալմամբ՝ իրենք ամուսնուն, հորը, որդուն աջակցելու/սպասարկելու համար են միայն: Կանայք չեն տեսնում իրենց իբրև կարևոր սուբյեկտ, հատկապես՝ հանրային տիրույթում: Իրավիճակը վերլուծելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ մենք հասկանանք ու սահմանենք միլիտարիզմը: Դա այն է, երբ ինչ-որ տեղում բանակն ամենակարևոր ինստիտուտն է: Այդպես է և Հայաստանում, իսկ հատկապես պատերազմից հետո բանակն էլ ավելի կարևորվեց: Միլիտարիզացված հասարակության մեջ կյանքը շատ սահմանափակված է, և հսկողությունն ավելի շատ է: Եթե պատերազմից առաջ Հայաստանում մարդիկ իրար նայում,

War inevitably increases the fragility of life.

While men face a higher risk of death being on the front line, women's vulnerability is defined by the responsibility to carry the burden of life. They must navigate work, provide for their children, take them to school, maintain their daily routines, and safeguard their well-being. In the context of war, the potential for violence expands beyond the battlefield and reaches homes.

A man, who is either afraid to engage in war or has directly experienced it, brings back an elevated tendency for violence, which can manifest anywhere.

Armenia is a predominantly masculine space.

While women recognize this pattern, they do not problematize it. From a woman's perspective, her role primarily revolves around providing support and service to her husband, father and son. Women tend to perceive themselves as insignificant actors, particularly in the public domain. In order to analyze the situation, we should first of all understand and define militarism. It is when the army becomes the primary institution in the given context. This applies to Armenia as well, particularly in the post-war reality. In a militarized society life becomes highly constrained, with intense levels of surveillance. Prior to the war, people in Armenia were scrutinizing and validating each other's lifestyle, based on various aspects, ranging from hairstyle, sitting posture, smoking habits, clothing choices, tattoos to sexual orientation. Now,

ստուգում ու միմյանց «ճիշտ» ապրելը հաստատում էին՝ սանրվածքից, նստելաձևից, ծխելուց, հագուկապից, տատուներից սկսած մինչև սեռականություն, ապա հիմա այդ ամենն ավելի է «խստացել»: Կանայք շատ ավելի խոցելի են այդ հսկողության հանդեպ, որովհետև առանց այդ էլ ուրիշների հայացքի տակ են: Միլիտարիզացված հասարակության մեջ/համար կինը պակաս արժեքավոր է, քանի որ զինվոր չէ: Հատկապես դարաբաղյան երկրորդ պատերազմից հետո միտքը, որ տղաները, տղամարդիկ ավելի կարևոր են տան, ընտանիքի, երկրի համար, շատ ավելի է կարծրացել: Գիտենք, որ Հայաստանում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդիր կա, ու եթե թվերը դեռ ցույց չեն տալիս աճի նոր տեմպեր, ապա որպես հետազոտող կարող եմ կանխատեսել, որ շուտով մենք դա կտեսնենք: Միլիտարիզացված հանրությունում հիմնական դերակատարումը, որ կինը կարող է ունենալ, զինվոր «սարքելն» է: Ինքն իր մարմնով զինվոր է պատրաստում ազգի համար, որ ազգն այդ զինվորին վերցնի, ուղարկի պատերազմ, ուղարկի մահվան, իսկ ծնողին թողնի միայն «չերոսի մոր» կոչումը: Կինը չի կարող «հերոս» համարվել, ավելին՝ նա դավաճան կպիտակվի, եթե պայքարի պատերազմի դեմ, եթե չթողնի, որ իր որդին բանակ գնա, որ իր որդին զոհվի: Նույնիսկ այն մայրերը, որոնք հարցեր ունեն, որոնք փորձում են հասկանալ, թե ինչ է եղել իրենց տղաների հետ բանակում, հերոս չեն կարող համարվել: Էմոցիոնալ առումով սա շատ դժվար և բարդ բան է

this whole scrutiny has become even more strict. Women are particularly vulnerable to this surveillance as they are already under the constant gaze of society. In/for the militarized society women's value is often diminished as she is not considered a soldier. Especially in the aftermath of the second Karabakh war, the belief that boys and men hold greater importance in the realms of home, family, and country has been reinforced. Armenia faces the issue of gender-based abortion, and even if the statistics may not currently reflect it, as a researcher, I can predict that the issue will become more apparent in the near future. In a militarized society the main role assigned to women is often limited to "producing" soldiers. Through her body, she "makes" a soldier for the nation, who is then sent off to war, potentially facing death. Meanwhile, the woman is left with the title of "Hero's Mother." A woman cannot be considered a hero - moreover, she will be labeled as a traitor - if she fights against the war, if she does not let her son join the army, and eventually die. Even the mothers who have questions, who try to understand what happened to their sons in the army, cannot be regarded as heroes. Emotionally this is very difficult and challenging, even for a nationalist and militarized woman who sends her son to a place from which he may never return. Militarization has redefined reproduction, turning it into a factory of death in public perception.

Նույնիսկ ազգայնական և միլիտարիզացված կնոջ համար, որն իր որդուն ուղարկում է մի տեղ, որտեղից նա կարող է այլևս չվերադառնալ: Միլիտարիզացիան հանրային ընկալումներում վերարտադրությունը վերածել է մահվան գործարանի:

Կնոջ նկատմամբ ճնշումը մեծանում է նաև սոցիալական վերարտադրության համատեքստում, ըստ որի՝ կնոջ աշխատանքը և գործունեությունը սոցիալապես այնքան կարևոր են, որ եթե կինը դադարի այդ աշխատանքն անել, կդադարի նաև սոցիալական կյանքը: Կինն է իր մարմնով կյանք ստեղծում, կինն է կառուցում մարդուն և հետևաբար՝ աշխարհը: Կինն է «մշակում» կյանքը, հոգ տանում, որ այդ կյանքը ողջ մնա: Հանրության համար կարևոր է, որ կինը անմնացորդ նվիրումով, ինքնազոհությամբ և, հաճախ սեփական անձը անտեսելով և չկարևորելով, շարունակի անել դա: Հակառակ դեպքում, եթե կինն իր անձը արժևորի, կարող է ասել՝ չէ, չի ուզում դա անել կամ այլ ձևով է դա անելու, ինչից կյանք արտադրելու գործընթացն ավելի կբարդանա: Պատկերացնո՞ւմ եք՝ այս փոքր ազգի համար հատկապես պատերազմից հետո ինչ խուճապ կբարձրանա, եթե կինն ասի, որ չի անելու դա: Միլիտարիստական մշակույթի համար շատ կարևոր է, որ կինն իրեն չհամարի մարդ, այլ համոզված լինի, որ ուրիշ ընտրություն չունի: Կինը պետք է շարունակի վերարտադրության անվերջ գործընթացը, որ հանրությունը շարունակի սպառել կյանքը: Քաղաքական տեսանկյունից՝ «ոչ» ասող կանանց դերը «պարտադիրը»

There is increasing pressure on women in the context of social reproduction as well. According to theory, women's work and activities are deemed socially significant to such an extent that if a woman stops fulfilling those responsibilities, social life itself would be disrupted. It is through a woman's body that life is brought into existence, and her role in shaping individuals ultimately contributes to the formation of the world itself. It is the woman who makes life, nurtures it, and ensures its survival through her care and dedication. Society highly values women's unwavering devotion, selflessness, and tendency to prioritize the needs of others, often at the expense of her own well-being. Otherwise, if a woman values herself, she can say "no" or express her preferences, which will complicate and challenge the process of reproduction. Could you imagine the panic in this small nation, especially after the war, if women were to declare they would not do it? In a militarized culture, it is important that women do not perceive themselves as individuals, but rather are convinced that they have no other choice. For society to persistently consume life, it is essential that women continue the ceaseless cycle of reproduction. When women say no and deviate from what is considered "mandatory," their role, from a political perspective, is to deliberately violate and defy established norms. This is a very vulnerable situation, especially in the war and post-war periods.

միտումնավոր խախտելն ու շեղելն է: Դա շատ խոցելի վիճակ է, հատկապես՝ պատերազմի և հետպատերազմական շրջանում:

Կինն իրավունք չունի մտածելու իր ցանկությունների, կյանքի ու ինքնախնամքի մասին: Նա պիտի տանը մնա, զինվոր «սարքի», ամուսնու մասին հոգ տանի, որովհետև դա կարևոր է հասարակության, բանակի ու երկրի համար: Հասարակությանը կնոջ ցանկությունը, սեռը պետք չեն: Սեռը, սեռական հարաբերությունները միայն զինվոր «պատրաստելու» համար պետք է լինեն, հակառակ դեպքում այդ ցանկությունն ազգի համար հանցագործություն է: Կինը կարող է ցանկություններ ունենալ, կարող է «սխալ» բաներ ցանկանալ, բայց դա ազգի համար վտանգավոր է: Ազգի մասին դիսկուրսները հասկանալի են, բայց եթե մենք իրականում հասկանանք, թե ազգն ինչ է, կբացահայտենք, որ այն մի շատ դժվար ու վտանգավոր գաղափար է, որի շուրջ լինում են բազում բռնություններ: Պատերազմի ժամանակ ազգի դերը մեծանում է, և \$եմինիստները կամ ոչ հետերոնորմատիվ կանայք դառնում են ազգի համար վտանգավոր: Այո՛, նրանք իրոք վտանգավոր են «ազգ» գաղափարի համար, և ես կարծում եմ, որ լավ է, որ վտանգավոր են: Այն կինը, որն ասում է «ոչ», ուզում է փոփոխություն բերել, բայց ազգը չի կարող փոփոխություն կամենալ. ազգի խնդիրն ազգ մնալն է:

Այս խնդիրների համատեքստում տարբեր իրավունքներ կարող ենք վկայակոչել, բայց, ընդհանուր առմամբ՝ սա բռնություն է կանանց նկատմամբ: Պատերազմը և

A woman has no right to think about her desires, life and self-care. She should stay at home, "produce" a soldier and take care of her husband, because these are important for society, army and country. Society does not need women's desire or sexuality. Sex, sexual relations and desires should solely serve the purpose of "producing" a soldier. Any other form of desire is considered a "crime" or "threat to the nation". Discourses about the nation are understandable, but if we delve into what the nation really is, we will realize that it is a very complex and dangerous idea, often entangled with significant levels of violence. During times of war, the significance of the nation intensifies, and feminists or non-heteronormative women are perceived as threats to the nation. Certainly, they do pose risks to the concept of the nation, and I believe this is a good thing. The woman who dares to say "no" desires to enact change, while the nation's priority is to resist change.

We can refer to different rights in the context of these problems, but in general, this is violence against women. War and militarization have brought us to a crisis. The term "crisis," derived from Greek, means a crossroad where divergent paths are available. A crisis represents a necessity to make a decision, no matter what path it would take. This crisis can open up new possibilities providing space to reexamine gender and sexual matters. If we fail to seize this opportunity at present, it may not arise

համընդհանուր միլիտարիզացիան մեզ բերել են ճգնաժամի՝ կրիզիսի: «Կրիզիս» բառը հունարեն է, նշանակում է խաչմերուկ, երբ ճանապարհը բաժանվում է և մի քանի կողմ առաջարկում: Կրիզիս նշանակում է որոշում կայացնելու ժամանակ. գուցե այս կողմ կամ այն կողմ, բայց, միևնույն է, անպայման պիտի որոշում կայացվի: Այս ճգնաժամին կարող ենք նայել նոր հնարավորություններ բացելու տեսանկյունից, հնարավորություն՝ գենդերային ու սեռական հարցերի շուրջ նորից մտածելու: Եթե այս հնարավորությունը կորսվի, շատ երկար տարիներ էլ չի հայտնվի, իսկ քննարկման արդեն իսկ սահմանափակ տիրույթը էլ ավելի կնեղանա: Ինչ կարող է անել ոչ հետերոնորմատիվ, գենդերային այլ ինքնություն ունեցող կինը: Նա կարող է պայքարել. ոչ թե գնալ փողոց ու գոռալ, այլ ապրել, դա էլ է դիմադրություն շատ խոցելի վիճակներում:

Գենդերային հավասարությունը՝ իբրև դիսկուրս, շատ խնդրահարույց է ինձ համար՝ որպես ֆեմինիստի: Ֆեմինիզմը ոչ թե հավասարության, այլ պայմաններն ամբողջությամբ փոխելու մասին է: Այն երկրներում, որտեղ կանայք ծառայում են բանակում, սեքսիզմի հարցը չի լուծվել, այլ ավելի է բարդացել: Կանանց ծեծում են, բռնության ենթարկում բանակում: Բանակում ծառայող կանանց համար շատ դժվար է: Բանակն ուրիշ՝ ոչ քաղաքացիական օրենքներով է կարգավորվում: Բանակի կարևորագույն օղակներում տղամարդիկ են, որ խիստ հազվադեպ են արդար վճիռ կայացնում: Գործերն էլ հազվադեպ են

again for many years, resulting in further narrowing of the already limited scope of the discussion. What can a woman with a non-heteronormative gender identity do? She can rebel. Resisting in these highly vulnerable situations does not necessarily entail taking to streets and shouting slogans: it can be achieved through the act of living itself.

As a feminist, I find the discourse on gender equality very problematic. Feminism aims to entirely transform the existing conditions, rather than solely seeking equality. In countries where women are involved in military service, the issue of sexism has not been resolved; rather, it has become more intricate. Women in the army often endure physical abuse and violence. A different legislation (not the civil law) regulates military activities, and men hold the majority of influential positions. Fair decisions or verdicts are rare; many cases do not even reach the court, as some victims choose not to report due to concerns of safety. We must understand that it is very hard for women, serving in the army.

We must not simply aspire for women to be equal to men, as it is to assume that our world would be ideal if women just resembled men. Men should not hold the positions they currently have, those positions should not exist in the first place. The notion of having an army, and women's involvement in it, needs to be questioned. If we talk about equality, then men can

հասնում դատարան, քանի որ շատերը չեն էլ բողոքում մտածելով, թե ավելի կվտանգեն իրենց:

Մենք չենք կարող մտածել, որ կանայք պետք է հավասար լինեն տղամարդկանց, որովհետև այդպես ստացվում է, որ աշխարհը կատարյալ կլինի, եթե կանայք պարզապես տղամարդկանց նման լինեն: Տղամարդիկ չպետք է լինեն այն դիրքերում, որտեղ հիմա են, այդ դիրքերն ինքնին չպիտի լինեն, բանակ չպիտի լինի, կինը չպետք է մտնի բանակ: Եթե հավասարության մասին ենք խոսում, ապա տղամարդիկ կարող են պատկերացնել, որ իրենք էլ կանանց պես չպետք է լինեն բանակում: Տարիներ առաջ խոսակցություններ կային, որ գեյերը պիտի ավելի ներգրավված լինեն բանակում, որ ավելի տեսանելի լինեն: Սա էլ շատ խնդրահարույց է նույն պատճառներով. ինչո՞ւ պետք է գեյերը այդ ձևով հավասարվեն մյուսներին: Մենք այսպես վերարտադրում ենք մի շատ վտանգավոր աշխարհ: Եթե իսկապես ուզում ենք հավասարության հասնել ոչ միայն կանանց և տղամարդկանց, այլև դասերի, ազգերի, երկրների միջև, ապա պիտի լրիվ փոխենք առկա կառուցվածքներն ու արմատապես այլ ձևով պատկերացնենք աշխարհը: Չենք կարող տարբեր խոցելի խմբերի ներառել վտանգավոր տարածքներում ու հետո դա կոչել հավասարություն:

Մինչև 2022 թվականի սեպտեմբերը, երբ ադրբեջանական զորքերը մտան Հայաստան, ես ասում էի, որ պետք է վերջ դնել այս հակամարտությանը, պետք է հողերը վերադարձնել, որ մենք չպետք է հողի համար



պայքարենք, պիտի մարդկանց համար
պայքարենք, հասկանանք, թե ո՞նց կարող ենք
միասին ապրել: 2022 թվականի սեպտեմբերից
հետո մտածում եմ, թե ինչպե՞ս կարող է
Հայաստանը բանակ չունենալ: Շատ եմ
վախենում, երբ մտածում եմ, որ Հայաստանն
առանց բանակի չի կարող: Պատկերացրեք,
թե ինչ է նշանակում դեմ լինել պատերազմին,
բանակին ու միլիտարիզմին և միաժամանակ
հասկանալ, որ Հայաստանը հիմա չի կարող
բանակ չունենալ:

Պատերազմն ու միլիտարիզացիան
հաղթահարելու համար մեզ պետք
է խաղաղության շարժում, բայց այդ
շարժումը պետք է լինի երկկողմանի՝
ադրբեջանցիների հետ: Պետք է
երկխոսությունը կայանա և ոչ թե երրորդ
երկրների փակ դահլիճներում և եվրոպական
ֆասիլիտացմամբ, այլ շատ ավելի հիմնային
և ընդգրկուն ձևով: Գուցե պետք է կապեր
հաստատել այն ադրբեջանցիների
հետ, որոնք հակապատերազմական
հայտարարություններ են անում, խոսել
Նրանց հետ, կիսել ու տարածել մեր
գաղափարները և երկու հանրություններում
էլ ընդլայնել խաղաղության շուրջ խոսույթը:
Պատերազմից հետո ես հասկացա, որ
մի անգամ եմ ադրբեջանցու հանդիպել.
Շատ անհանգիստ էի ու չէի էլ փորձել
ճանաչել Նրան: Դա ճիշտ չէ, որովհետև
հենց միմյանց ճանաչելն է խաղաղության
միջոցը: Իրական երկխոսություն չի կարող
լինել, երբ ուրիշն է կազմակերպում ու
առաջ բերում իր պայմանները, թեմաները,
ժամանակը և այլն: Ես խոսում եմ իրական

envision themselves not being part of the army just like women. I recall discussions from a few years ago, suggesting that greater visibility of gay individuals in the military could be achieved by their increase in number in the army. This is also very problematic for the same reasons: why should gays be equal to others in this way? In this manner, we reproduce a very dangerous world. If we genuinely aspire for equality, not only between women and men, but also among classes, nations, and countries, we must fundamentally transform the existing structures and imagine a completely different world. True equality cannot be achieved by consistently placing vulnerable groups in dangerous spaces and labeling it as equality.

Prior to September 2022, when Azerbaijani troops entered Armenia, I advocated for ending the war, returning the lands, and shifting the focus from fighting over land ownership to fostering peaceful coexistence among the people. In light of the September events, I can not imagine Armenia without an army. It is incredibly alarming for me to think that Armenia cannot survive without an army. Imagine what it feels like to be against war, army and militarism, and yet understand that at this point in time Armenia cannot exist without an army.

To overcome war and militarism we need a peace movement, and that movement should start together with Azerbaijanis. The dialogue should occur in a more fundamental and

Երկխոսության մասին, իրական մարդկանց
մասին, այլ ոչ քաղաքական գործիչների,
չԿ ներկայացուցիչների կամ տարատեսակ
փորձագետների, որոնք վաղուց արդեն այլ
իրականությունում են ապրում: Նրանք արդեն
այլ կերպ են զգում, մինչդեռ սովորական
մարդկանց զգացողություններն են պետք
Երկխոսության համար: Երկխոսությունը պետք
է լինի շատ մտերմիկ և էմոցիոնալ մի բան:
Միայն շատ մտերմիկ խոսակցություններից
են մարդու միտքը և սիրտը սկսում փոխվել:
Մարդու սիրտը պիտի բացվի մյուսի համար,
և դա չի կարող լինել կոնֆերանսի սեղանի
շուրջը: Իրական երկխոսությունը հնարավոր
է միայն մտերիմ տարածքում և մտերիմ
խոսակցությունների շուրջ, և այս ամենը
հատկապես կանայք շատ հեշտ կարող են
կազմակերպել: Մտերիմ տարածքը կանանց
տարածքն է, որտեղ ապրվում է իրական
կյանքը:



comprehensive manner, rather than being held by European facilitation in closed halls of third countries. Perhaps we should engage with Azerbaijanis who express anti-war sentiments, initiate conversations with them, share and disseminate our ideas, and broaden the discourse on peace within both societies. After the war, I realized that I had met an Azerbaijani only once. I was very anxious and didn't even try to get to know them. That is not the right approach, because knowing each other is the path to peace. A genuine dialogue cannot occur when someone from outside dictates the terms, sets the agenda, and decides on the timing of the discussion. I am referring to real dialogue, real people, and not politicians, NGO representatives or various experts who for a long time already have been living in a different reality. The participation of ordinary people and their genuine emotions are vital for fostering authentic dialogue. The dialogue should be heart-to-heart and evoke strong emotions. It is only through very intimate conversations that a person's mind and heart begin to change. People must open their hearts to each other, and this cannot happen around a conference table. Authentic dialogue thrives in intimate spaces and revolves around personal conversations, and women can play a pivotal role in facilitating and contributing to this. The intimate space, often associated with femininity, is where genuine life experiences unfold.

p.s.

Հետագիր



Մեկ տարի առաջ, երբ Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիայի թիմով ձեռնամուխ եղանք «ZINEադադար» նախագծին, որը հայաստանյան իրականությունում մի կողմից բաղձալի, մյուս կողմից՝ անորոշությունն արտացոլող «զինադադար» բառի հետ հարաբերվելու և տրավմատիկ փորձառությունը ստեղծարար վավերագրության վերածելու փորձ էր, չայաստանն ու տարածաշրջանը շարունակում էին բովվել պատերազմների ու հակամարտությունների հետևանքով վրա հասած իրականությունում:

Հետպատերազմյան լանդշաֆտը խաթարված էր դժվարին քաղաքական, տնտեսական և հումանիտար ճգնաժամերով, որոնք տարածվում էին ոչ միայն չայաստանում և Լեռնային Ղարաբաղում, այլև թևաբախում տարածաշրջանի այլ երկրներում՝ Ուկրաինայում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և այլուր: Վախի ու առկախվածության մթնոլորտում «ZINEադադար»-ը մեկնարկեց իբրև կանանց փորձառության վավերագրության, մխիթարության, սփոփանքի և ըմբոստության տարածք:

Պատերազմների ու հակամարտությունների համատեքստում կանանց փորձառությանն առանձնակի անդրադառնալու ցանկությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ այն հաճախ կորսվում է առավել ծավալուն նարատիվների ստվերում: Մեզ համար հստակ է, որ հասարակության վրա պատերազմների ու հակամարտության ազդեցությունների շրջանակն անհնար է հասկանալ առանց

A year ago, as Armenia and the region grappled with the aftermath of conflict and war, our team at the Cultural and Social Narratives Lab embarked on the "ZINEadadar" (translated from Armenian as "ceasefire") project. This initiative was a profound exploration of the Armenian word for "ceasefire," a term evoking both positive and uncertain emotions within Armenian society. Simultaneously, it sought to transform a traumatic experience into a creative documentary.

The aftermath of war was marred by intricate political, economic, and humanitarian crises, extending not only across Armenia and Nagorno Karabakh, but also affecting countries like Ukraine, Belarus, Georgia, Moldova, and beyond. In this climate of fear and uncertainty, "ZINEadadar" emerged as a space for solace, defiance and documentation of women's experiences.

The motivation for amplifying women's voices amid the backdrop of war and conflict stems from the tendency for these accounts to be overshadowed by more overarching narratives. We hold a firm conviction that comprehending the societal impact of war and conflict necessitates a thorough examination of women's presence or absence, as well as the roles attributed to them in the post-war milieu. Through "ZINEadadar" we established conduits that connected mainstream and marginalized discourses, fostering a culture of dialogue and rendering women's experiences both visible

խորապես ուսումնասիրելու, վերլուծելու
այս առնչությամբ կանանց ներկայությունը,
բացակայությունն ու նոր իրականությունում
նրանց վերագրվող տարբեր դերերը:
«ZINEադադար»-ի միջոցով մենք ստեղծեցինք
հարթակներ՝ կամրջելու հանրության լայն
շրջանակներում տարածված ու լուսանցքում
մնացած խոսույթները, ձևավորելու
երկխոսություն մշակույթի միջոցով և
վերջապես լսելի, տեսանելի և գնահատելի
դարձնելու կանանց փորձառությունը:

Տարածաշրջանի տարբեր երկրներում
ապրող կանանց պատմություններին
անդրադառնալով՝ մենք ցանկանում էինք
հյուսել մի համապարփակ վկայություն,
որը կընդդիմանար պարտադրված
ազգային բաժանումներին, դուրս կգար
քաղաքական օրակարգերից ու սահմաններից
և կարտացոլեր կանանց ամենօրյա
պայքարը՝ արժանապատիվ կյանքի ու
խաղաղության համար: Սահմաններ
չճանաչող կարեկցանքի ու ապրումակցման
ճանապարհով մենք փորձեցինք
ցույց տալ, որ կանանց դիմակայած
մարտահրավերները հակամարտության
ու պատերազմի մի կետում հաճախ շատ
նման են այլոց փորձառություններին
այլուր: Մեր պատկերազարդ զիներն ու
փողքասթներն այս ամիսների ընթացքում
հատել են բազմաթիվ սահմաններ՝ անցնելով
Հայաստանի մարզերով ու հասնելով Արցախ/
Լեռնային Ղարաբաղ, Ուկրաինա, Վրաստան,
Լեհաստան, Գերմանիա, Դանիա, Կանադա
և այլուր՝ այսպիսով ծառայելով որպես
հակամարտություններից ու պատերազմներից

and valued. Drawing inspiration from the narratives of women across various countries in the region, our aim was to intricately thread together a comprehensive testimony. This testimony would not only confront imposed national boundaries and transcend political motivations and geographical barriers but would also authentically capture the daily struggles of women for lives of dignity and peace. Guided by universal compassion and empathy, we aimed to reveal that the challenges women encounter amidst conflict and war are frequently akin to the experiences of their counterparts in different regions. Over these months, our illustrated zines and podcasts transcended numerous borders, traversing from Armenia to Artsakh/Nagorno-Karabakh, Ukraine, Georgia, Poland, Germany, Denmark, Canada, and beyond. In doing so, they functioned as a platform fostering unity, mutual comprehension, and solidarity among women impacted by conflicts and wars.

"ZINEadadar" is one of the many projects undertaken by the "Cultural and Social Narratives Lab," which strives for peaceful conflict resolution, the cultivation of cultural dialogues, the advancement of gender studies, and the facilitation of public discourse concerning cultural rights.

As we wrap up this project, we extend our profound gratitude to those who have been instrumental in its realization. Our gratitude resonates with the women who entrusted us with narratives of their

տուժած կանանց միավորման, փոխըմբռնման
ու համերաշխության միջոց:

«ZINEադադար»-ը մեկն է Մշակութային
և սոցիալական նարատիվների
լաբորատորիայի բազմաթիվ նախագծերից,
որ միտված են հակամարտությունների և
պատերազմների խաղաղ հանգուցալուծմանը,
մշակութային երկխոսության ձևավորմանը,
գենդերային ուսումնասիրությունների
իրականացմանը և մշակութային
իրավունքների շուրջ հանրային խոսույթի
խթանմանը:

Եզրափակելով այս նախագիծը՝ ցանկանում
ենք մեր խորին երախտագիտությունը
հայտնել այս նախագծի իրականացման
մեջ իրենց կարևոր ներդրումն ունեցած
բոլոր մարդկանց: Շնորհակալ ենք բոլոր
կանանց, որոնք մեզ վստահեցին իրենց
ծանր ու տրավմատիկ, բայց և ուժ տվող ու
ապրեցնող փորձառությունը: Շնորհակալ
ենք բոլոր փորձագետներին, որոնք
նպաստեցին, որ հակամարտության ու
պատերազմի համատեքստում կանանց
փորձառության շուրջ գիտական խոսույթը
դառնա առավել հանրամատչելի: Շնորհակալ
ենք բոլոր վիզուալ արվեստագետներին
և պատկերազարդողներին, որոնք
ստեղծագործությունների շնորհիվ մեր
հրապարակումներն ու փողփասթները ձեռք
բերեցին նոր զգայական և նշանագիտական
իմաստներ: Շնորհակալ ենք բոլոր այն
մարդկանց, որոնք անշահախնդրորեն իրենց
անխոնջ աշխատանքով աջակցեցին մեր
ստեղծագործական թիմին, շնորհակալ ենք
աշխարհի տարբեր ծայրերում բնակվող



մարդկանց, որոնք սրտաբաց ընդունեցին մեր զիններն ու փողքասթներն ու մեզ հետ կիսեցին իրենց կարծիքներն ու խորհուրդները: Առանձնակի շնորհակալություն ենք հայտնում Կանադայի տեղական նախաձեռնությունների հիմնադրամին, որի օժանդակության շնորհիվ էլ իրականություն դարձավ «ZINEադադար» նախագիծը:

Մինչ մենք թևածում ենք նորանոր նախագծերի մտահղացման ու իրականացման փուլ, լիահույս ենք, որ «ZINEադադար» նախագծի շրջանակներում ստեղծված նյութերը հենման կետ կհանդիսանան աշխարհի տարբեր ծայրերում պատերազմներից ու հակամարտություններից տուժած կանանց համար, կնպաստեն հանրության լայն շրջանակների արժեհամակարգերի ու առաջնահերթությունների խնդրականացմանը, (վերա)սահմանմանն ու (վերա)հիմաստավորմանը, կխթանեն, որ որոշում կայացնող մարմիններն ու կառույցները գենդերային հարցերի տեսանկյունից առավել զգայուն քաղաքականություններ մշակեն, և որ այս ամենը կնպաստի տարածաշրջանում պատերազմների ու հակամարտությունների հանգուցալուծմանը, երկխոսության ու խաղաղության հաստատմանը:

arduous, traumatic, yet transformative and rejuvenating experiences. Our thanks go to the experts who played a vital role in rendering the scholarly discussion on women's experiences within conflict and war more accessible to the broader public. We express our gratitude to the visual artists and illustrators whose creativity infused our publications and podcasts with fresh sensory and symbolic dimensions. Heartfelt thanks go out to those who wholeheartedly supported our creative team with their ceaseless efforts. We also extend our appreciation to individuals worldwide who embraced our zines and podcasts, generously sharing their feedback. A special acknowledgment is reserved for the The Canada Fund for Local Initiatives whose backing transformed the "ZINEadadar" project from a vision into a reality.

As we transition into the phase of conceptualizing and executing new ventures, we hold a strong optimism that the materials born from the "ZINEadadar" project will serve as a source of strength for women impacted by conflicts and wars across diverse regions, and will foster problematisation, (re)evaluation, and (re)configuration of societal value systems and priorities, encouraging decision-making entities and structures to cultivate more gender-sensitive policies. Ultimately, we envision these efforts contributing to conflict resolution, dialogue promotion, and the cultivation of lasting peace within the region.

